

ԻՍՀԱ ԱՌԵՎՏՏԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԽԱՆՈՒԹԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ



ՅԵՐԵՎԱՆ — 1940

01 OCT 2010

ԻՍՂԱ ԱՌԵՎՏՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

658 ԱՎ  
ԴԱ-27

ԽԱՆՈՒԹԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ

06 MAY 2016

## ԽՍՀՄ ԱՌԵՎՏՐԻ ԺՈՂԿՈՄԱՏ

Հ Բ Ա Մ Ա Ն Ն Յ 506

1939 թ. սպառով 21-ին

քաղ. Մուկվա

«ԽԱՆՈՒԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»

Խանութների աշխատանքի զեկավարությունը կարգավորելու և սոցիալիստական սեփականության անվտանգության համար տարգող պայքարն ուժեղացնելու նպատակով հրամանաւում են

1. Հաստատել սույն հրամանին կցված «Խանութի աշխատանքի հիմնական կանոնները» և կիրատել կյանքում 1939 թ. նոյեմբերի 1-ից սկսած։

2. Պարտավորեցնել միութենական և ավտոնոմ հանրապետությունների առևտուրի ժողովրդական կոմիսարներին, ԽՍՀՄ Առևտուրի ժողովրդական կոմիսարների (զլիավոր վարչությունների) ու գրահենյակների պետերին, մարզային (յերկրային) առևտուրի բաժինների վարիչներին՝ կազմակերպել խանութների զիրեկտորների, նրանց ոգնականների, սեկցիաների (բաժինների) վարիչների, նրանց ոգնականների, հաշվապահների, գանձապահների և վաճառողների համար՝ ԽՍՀՄ Առևտուրի ժողովրդական կողմից հաստատված «Խանութի աշխատանքի հիմնական կանոններն» ուսումնասիրող սեմինարներ և ավարտել այդ «Կանոնների» ուսումնասիրումը վերոհիշյալ կարգի աշխատողների համար առ 1-ը դեկտեմբերի 1939 թ.։

3. Սահմանել վոր ԽՍՀՄ Առևտուրի ժողովրդական բոլոր առևտուրական ձևնարկությունների սիստեմի խանութների զիրեկտորները և նրանց ոգնականները, սեկցիաների (բաժինների) վարիչները և նրանց ոգնականները, ինչպես նաև հաշվապահները, գանձապահները և վաճառողները պարտավոր են իմանալ սույն հրամանով հաստատված «Խանութի աշխատանքի կանոնները»։



1431

40

4. ԽՍՀՄ Սուստրի ժողկոմատի սխստեմի բոլոր Առևտրական կազմակերպություններին 1939 թ. դեկտեմբերի 1-ից արգելել կատարելու խանութների դիրեկտորների, նրանց ոգնականների, սելցիաների վարիչների (բաժինների), նրանց ոգնականների, հաշվապահների պարտականություններն այն աշխատողներին, վորոնք գեռես «Խանութի աշխատանքի հիմնական կանոնների» գիտելիքների մասին քննություն չեն տվել:

5. Սահմանել վոր առևտրական կազմակերպության դիրեկտորը կրում և անձնական պատասխանատվություն խանութներում նոր ընդունվող ղեկավար անձնակազմի, ինչպես նաև նյութապես պատասխանատու այն աշխատողների ընդունման համար, վորոնք չգիտեն «Խանութի աշխատանքի հիմնական կանոնները»:

6. ԽՍՀՄ Սուստրի ժողկոմատի կողմից հաստատված «Խանութի աշխատանքի կանոնների» գիտելիքների մասին աշխատողներից պահանջվող ստուգումները կատարվում են առևտրական կազմակերպությունների վորակավորող հանձնաժողովների միջոցով:

7. Սույն հրամանին կից հաստատված «Խանութի աշխատանքի հիմնական կանոնների» հրատարակման կապակցությամբ համարել ուժը կորցրած ԽՍՀՄ ներքառժողկոմատի և Սուստրի ժողկոմատի տվյալ հարցի մասին մինչև այժմ հրատարակված բոլոր վորոշումները և հրամանները:

ԽՍՀՄ Առևտրի ժողկոմ  
Ա. ԼՅՈՒԲԻՄՈՎ

## ՌԱՋԻՆ ՍՈՒԶԱԿ

### ԽԱՆՈՒԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

#### I. ՎՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՐԻՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽԾԸ

1. Խանութում ապահնքները բաց են թողնվում մաքուր քաշով, լրիվ չափով կանչիկ վճարով:

2. Լավագույն կերպով գնորդների սպասարկումն ապահովելու նպատակով խանութը պետք է ապրանքների բացթողումը կազմակերպի այնպես, վոր գնորդի համար ստեղծվի հսարավորություն ծանոթանալու խանութում յեղած ապրանքների բոլոր ասորակիմնաների հետ: Այդ նպատակի համար ապրանքները պետք է դասավորված լինեն այնպես, վոր առջև դարսված առարկաները չփակեն հետեւում դարսվածներին: Դարսակներում դեմքեղված ապրանքները պետք է լավ յերևան գնորդներին: Ապրանքների ցուցադրման համար պետք է գործածել ապակեպատ վաճառասեղաններ, պուրակներ, ցուցափեղեր և այլն:

3. Գնորդին պետք է ցույց տալ լայն աջակցություն նրան անհրաժեշտ ապրանքների ընտրման գործում՝ ապրանքների հատկությունները և վորակը ցույց տալու, ապրանքների գործածման կարգը, ապրանքի պահպանման պայմանները բացատրելու և նման միջոցներով:

Խանութը պետք է գնորդների համար հսարավորություն ստեղծի ապրանքը չափափորձելու և տրամադրի այդ բանի համար անհրաժեշտ պայմաններ (նստարաններ, բագկաթումներ, հայելիներ և այլն):

4. Վաճառված ապրանքը լինորդին հանձնելուց առաջ, վաճառողները պարտավոր են մանրազնին ստուգել բաց թողնված ապրանքի վորակը:

Յեթե գնորդն ապրանքի գնման ժամանակ կպարզի, վոր վերջինս անվորակ է, այդ գեպքում խանութը պարտավոր է, առանց այլայլության, գնորդի պահանջի համաձայն, փոխել այդ ապրանքը վորակավոր ապրանքով կամ հետ ընդունել այդ ապրանքը, վերադարձնելով նրա արժեքը գնորդին:

Յեթև գնորդն իր գնած ապրանքի գործածում ընթացքում հայտնաբերի նրա թաքնված թերությունները կամ ապրանքը գործածման ընթացքում չդիմանված սահմանված յերաշխավորող ժամկետներին, այդ դեպքում խանութը պարաւավոր ե ապրանքաները վերանորոգել փոխել կամ հետ ընդունել (վերադարձնելով արժեքը գնորդին) համաձայն ԽՍՀՄ Ժողկոմիսորի 1939 թ. ոգուատուի 29-ի № 1306՝ «Պետական, տնտեսվարական, կոռպերատիվ և հասարակական կազմակերպությունների կողմից իրար հանձնվող անհամապատասխան վորակ ունեցող ապրանքների վերաբերյալ հայցերի կարգի ու ժամկետների մասին» վորոշմանը:

5. Խանութի աչքի ընկնող տեղում պետք ե զետեղված լինի մանրածախ ապրանքի գների ոլրիշակուրանները; Բացի գրանից գները պետք ե նշված լինեն նաև ապրանքների վրա (հատուկ յառիկներ):

6. Ապրանքները գնորդներին բաց են թողնվում մաքուր քաշով և լրիվ չափով:

Թերակլուկ և թերաչափել գործածելով վաճառքի ժամանակ անձիշտ կշռքներ, կշռաքարեր և ուրիշ անձիշտ կշռաչափի պարագաներ, նմանապես խախտել ապրանքների համար սահմանված մանրածախ գները, ցած տեսակի ապրանքը վաճառել բարձր տեսակի գներով, գնորդներից թաքցնել ապրանքների պրեյուրանտային գները, այդ բոլորը՝ հետապնդվում են վորպես գնորդի կողոպատում և խորհրդային պետության խարում:

7. Գնորդին կշռովի ապրանք բաց թողնելիս (հաց, յերշիկեղեն, պանիր և այլն) թույլատրվում ե ավելացնել վորպես քաշից (ՃՈՎԵՏԿԱ) յերկու կտորից վոչ ավել և գնորդի պատվերի ընդհանուր քաշի 10 տոկոսից վոչ ավելի՝ միենույն ժամանակ քաշիցից կտորները իրենց տեսակով և վորակով համապատասխան պետք ե լինեն բաց թողնվող ապրանքին:

8. Բաց թողնվելիք, նախորդ չփաթեթված ապրանքների կտրատումը, լցնումը, չափումը և կշռումը պետք ե կատարվի գնորդի աչքի առաջ:

9. Խանութներից ապրանքների վաճառքը կատարվում ե կանխիկ վճարով: Վաճառողն ապրանքները բաց թողնելիս՝ պարտավոր ե գնորդից ստացած չեկը անցկացնել մեխացին (ԱԿՈԼ-ԿԱ). յուրաքանչյուր վաճառող հաշվում ե իր մեխացին անցկացրած չեկերը, կապում, մակագրում և իր ստորագրությամբ նշում հաշված չեկերի վրա ընդհանուր գումարը:

Հաշված չեկերը հանձնվում են սեկցիաների (բաժինների) վարիչներին, իսկ վերջիններս այդ չեկերի հիման վրա կազմում են սեկցիաների մի որվա (հերթափոխության) ապրանքների վաճառքի մասին ամփոփաղների: Սեկցիաների վարիչների ամփոփաղները հանձնվում են խանութի գիրեկառորդին, խանութի վաճառքի ընդհանուր գումարը դրամարկղների տվյալների հետ համեմատելու համար, տարբերությունը հայտնաբերելու դեպքում չեկերը վերադարձվում են սեկցիաներին կամ բաժիններին, այդ չեկերը կրկնակի հաշվելու համար: Կրկնակի հաշվումը պետք ե ավարտվի վոչ ուշ, քանի հետևյալ գործառնային որվա ժամը 11-ին:

Դրամարկղների կանխիկ դրամի հետ ստուգված ապրանքների վաճառքի գումարները՝ սեկցիաների (բաժինների) վարիչները մացնում են նրանց կողմից կազմված ամենորյա ապրանքային հաշվետվությունների մեջ:

Ծանրաբարյան:— Արգելվում ե վաճառողներին չեկերը հանձնել մեկը մյուսին:

10. Հատավաճառ ապրանքների բաժիններին՝ ապրանքների մատակարարումը կատարվում ե խանութի գիրեկառորդի կողմից վորոշված լիմիտի սահմաններում, խանութին կից պահեստի միջոցով:

Ընդհանուր պահեստի բացակայության գեղքում հատավաճառ ապրանքների բաժիններն ստանում են իրենց համար անհրաժեշտ քանակի ապրանքներ խանութի համապատասխան սեկցիաներից կամ բաժիններից:

Հատավաճառ բաժիններին ապրանք բաց թողնելիս բոլոր դեպքերում ձևեկերպվում ե յելքի բեռնագրով՝ անմիջապես ապրանքի բաց թողման ժամանակ:

Հատավաճառ բաժինների վարիչները վաճառքից գոյացած գումարը ամեն որ հանձնում են գանձապահին կամ խանութի գիրեկառորդին մուտքի որդերով:

11. ԽՍՀՄ Ժողկոմիսորին կից տնտեսական խորհրդի 1938 թվի հոկտեմբերի 1-ի № 707 վորոշման համաձայն՝ մանրածախ մեծաքանակի կարգով ապրանքների բաց թողումը հիմնարկներին ու կազմակերպություններին սահմանված լիմիտների չափով կատարվում ե միայն այն խանութների կողմից, վորոնց թույլ և տրված այդ գործարքը կատարել սիութենական հանրապետությունների առևտորի ժողկոմների կողմից:

Այդ խանութներից մանրածախ-մեծաքանակ ապրանքների բաց թողումը հիմնարկներին, ձեռնարկություններին և կազմակերպություններին կատարվում ե այդ ձեռնարկությունների, հիմնարկների կամ կազմակերպությունների պետերի կողմից ստորագրված պահանջագրերի համաձայն:

12. Մանր-մեծաքանակ ապրանքի վաճառքի համար առանձնացված խանութները յուրաքանչյուր վաճառքի գեղքում տալիս են գնորդին հաշվիվ, զոր հանդիսանում ե միակ հաշվապահական փաստաթուղթ՝ ապրանքի գնման փաստը հաստատելու մասին:

13. Ապրանքների փոխադրումը նույն սիստեմին յենթակամի առևտուրական ձեռնարկությունից յուսը կատարվում ե միմիայն նույն սիստեմի վերադաս առևտուրական կազմակերպության գիրեկտորի գրավոր կարգադրության համաձայն:

Ապրանքների տեղափոխումը խանութի ներսում (մի սեկցիայից մյուսը) կատարվում ե խանութի գիրեկտորի գրավոր կարգադրության համաձայն: Ապրանքների տեղափոխման գեղքում դուրս են գրվում յելլց ապրանքային բեռնագրեր սահմանված կարգով, ապրանքային բեռնագրի մի որինակը, ապրանքների տեղափոխման մասին տրված գրավոր կարգադրության հետ միասին հանձնվում ե հաշվապահությանը՝ նյութական պատասխանաց հաշվետվության հետ միասին:

14. Առևտուրի տեղողության ժամերը սահմանվում են, տեղական առևտուրի բաժինների առաջարկությամբ, տեղական խորհուրդների կողմից՝ համաձայն հետևյալով՝ այդ առևտուրական, արհեստակցական և մյուս շահագրգության կազմակերպությունների հետ:

15. Խանութի բացման ու փակման ժամանակի մասին պետք ե փակցը լինի առանձին հայտարարություն խանութի մուտքի դռան վրա:

Գնորդների մուտքը կանութ դադարեցվում ե խանութը փակելուց 15 րոպե առաջ, փակման ժամանակ խանութը գրտնը բոլոր գնորդները պետք ե սպասարկվեն:

16. Խանութի փակելը վերանորոգման պատճառով կարող ե տեղի ունենալ միայն տեղի առևտուրի բաժնի թույլտվությունից հետո: Վերանորոգման պատճառով խանութը փակելուց առնվազն 5 որ առաջ՝ խանութի գիրեկցիան պարտավոր ե տեղեկացնել գնորդներին առաջիկա փակման մասին, ըստ վորում, բացի խանութի փակման ժամանակից պահանջարկից պետք ե սպասարկվեն:

Խանութի հասցեն, վորտեղ վաճառվում է նման ապրանքների տեսակները:

II. ԴՐԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՈՐՎՅ. ՎԱՃԱՌՈՒԹՅԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՑԵՆՏՐԱԼ ԾԱՀԱՆՔԸ

17. Մեկ հերթափոխության համար յերեքից ավելի վաճառողներ ունեցող խանութներում, գնորդներից ապրանքների գիշեց գրամ ստանալու համար, պետք ե կազմակերպվեն գրամարկըներ՝ մեխանիկական գրամարկային ապարատներով:

Մեխանիկական գրամարկային ապարատների բացակայության գեղքում գրամի ստացումը կատարվում ե չափալարային գրամարկիների (րուլոններ) կամ վաճառողների և գանձապահների կողմից գրվող համարակալած չեկերի միջոցով: Այն խանութներում, վորտեղ յերեքից պակաս վաճառողներ են աշխատում, գրամի ստացումը կատարվում ե խանութի գիրեկտորի կամ վերջինիս ցուցմունքով վաճառողի միջոցով:

Հատավաճառ բաժիններում, նաև կրպակներում, վաճառակիուններում վաճառքի գրամն ստանում են իրենք վաճառողներն անմիջապես:

Խանութը.—Չափալարային գրամանիշները (րուլոններ) հաշվառվում են վորտեղ խիստ հաշվետվություն-փաստաթղթեր:

18. Այն խանութներում, վորտեղ աշխատում են հինգից ավելի հաստիքային գանձապահներ՝ սահմանվում ե ավագ գանձապահի պաշտոն, վորտեղ պարտականությունն ե հավաքել գործող գրամարկիներից որվա գրամարկան հասույթը և ամենորյա վաճառքի գումարը մուծել Պետքանկ, ստանալ և վճարել գրամն ըստ պատկանելույն, ձեւկերպված դոկումենտների հիման վրա, վարել Պետքանկի կողմից սահմանված ձեւի ժամանակած գրամարկային հաշվետվություն կազմել:

Խանութը.—Ավագ գանձապահի պարտականությունները կարող ե գրվել խանութի գանձապահներից մեջի վրա:

19. Խանութներն իրենց գրամարկային հասույթը հանձնում են Պետքանկ այն ժամկետներով ու կարգով, վոր նախատեմներով կամ կազմակերպությունը 1937 թ. վետրվարի 25-ի № 327 և 1938 թ. հուլիսի 13-ի № 823 վորշտամերով և ԽՍՀՄ Պետքանկի վարչության 1939 թ. փետրվարի № 172 հրահանգով:

20. Պետքանկին հանձնվում ե որվա վաճառքի ամբողջ գու-

մարք: Աշխատավարձը վճարելու և մյուս անհետաձգելի ծախսերի համար պարենային խանութները կարող են ծախսել իրենց որվա հասույթի 7 տոկոսից վոչ ավելին, արդյունաբերական ապրանքների խանութները՝ 5 տոկոսից վոչ ավելի:

21. Ինքնուրույն հաշվեկշռի անցած խանութների գանձապահները իրավունք ունեն բաց թողնել դրամական գումարներ 20-րդ կետում ցույց արված չափով, միայն խանութի զիրեկտորի և հաշվապահի կողմից վավերացված ծախսաման գույնունների հիման վրա. ինքնուրույն հաշվեկշռի չանցած խանութներում անտեսվարական ծախսերը կատարելու համար՝ այդ խանութների զիրեկտորները, վորպես կանոն, ստանում են անհրաժեշտ գումար առհաշիվ ամիսը յերկու-յերեք անգամ:

Ծանօթարյան.— 1. Գանձապահները կարող են չոգտագործված չեկերի դիմաց վերադարձնել դրամը գնորդներին միմիայն խանութի զիրեկտորի կամ նրա ողնականի թույլտվությամբ: Գնորդներին դրամը վերադարձվում ե միայն այն դրամարկղից, վորտեղից բաց և թողնված չեկը:

2. Վերադարձված ապրանքների դիմաց՝ գնորդներին դրամը վերադարձվում ե ինանութի զիրեկտորի թույլտվությամբ և ձեակերպվում ե հատուկ դրամարկղային որդեր գուրս գրելով:

22. Այս խանութներում, վորտեղ գոյություն չունի ավագ գանձապահի պաշտոն, գործող դրամարկղների գանձապահներն իրենց որվա վաճառքի հասույթը հանձնում են առանձին ստորագրությամբ ինանութի զիրեկտորին կամ նրա ողնականին, վորդները պարտավոր են ամենորյա վաճառքի հասույթը հանձնել Ներքործողկոմատի ֆելդկապին կամ անմիջապես մուծել Պետքանի համապատասխան դրամարկղը:

23. Գանձապահների հերթափոխության ժամանակ՝ չի թույլտվում փոխվող և աշխատանքի անցնող գանձապահների միջև վորեւ հաշվառք:

Հերթը հանձնող գանձապահը պարտավոր է առանց համրելու իր հետ վերցնել դրամարկղի ամբողջ կանխիկ գումարը, առանձնացնելով իրեն փոխարինողին անհրաժեշտ քանակի մանր դրամի վերջնական համրումը կատարել խանութի դրամենյակում: Գանձապահների հերթափոխման ժամանակ պարտա-

գոր են ներկա լինել խանութի դիրեկտորը կամ ավագ գանձապահը:

24. Խանութի գիրեկտորը պարտավոր ե ամեն որ, գործառնային որվա վերջը կամ գանձապահի հերթափոխման ժամանակ, ստուգել մեխանիկական գանձարկղի հաշվառիչի ցուցանիշները և չափալարային դրամարկղներից չգործադրված մարկաների մուծած գումարները: Ամեն որ այդ ցուցանիշները համեմատվում են իրացված շրջանառության հետ, վորը գուրս և բերված վաճառողների չեկերը հաշվելու հիման վրա, նմանապես գանձապահների փաստորեն հանձնած գումարի հետ: Դրամարկղների համեմատումը պիտի և ավարտել հետեւյալ գործարքային որվա ժամը 11-ից վոչ ուշ:

Դրամարկղային չեկերը չարաշահությունից կանխելու համար՝ պետք է չեկերի վրա գործածել պայմանական նշանագրեր, սահմանել չեկերի առավելագույն գումարները, գործադրել գրամարկղների կնիքները և նման միջոցառումներ:

25. Ոգտագործված չեկերը պետք է պահվեն նյութապես պատասխանառու անձանց մոտ գույքահաշվառումից յերկու ամսվա ընթացքում, իսկ դրամական պակասորդի հայտնաբերման դեպքում՝ մինչև գործի քննության ավարտումը:

Դրամարկղային հսկող ժամակվենը պետք է պահպի այն անձանց մոտ, վորոնք վերցնում են հաշվառիչի ցուցանիշները (խանութի զիրեկտորի, նրա ողնականի մոտ), գույքահաշվառումից հետո յերկու ամսվա ընթացքում, իսկ պակասորդ հայտնաբերելու դեպքում՝ մինչև գործի քննության ավարտումը:

Ծանօթարյան.— Ոգտագործված դրամարկղային չեկերը և հսկող ժամակվենները պետք է պահվեն խանութում դասավորված և կնքված կամ կապարակնքված (պլոմբավորված) պիճակում:

26. Ոգտագործված դրամարկղային չեկերը և հսկող ժամակվենները, նրանց պահելու համար սահմանված ժամկետը լրանուց հետո՝ պետք է մարված վիճակում հանձնել ուտիլ մթերող կազմակերպություններին, վորպես ուտիլ ոգտագործելու համար, թիթեւ Արդ. Փողկոմատի «Սոյուզուտիլ» միութենական գրասենյակի ցուցմունքի համաձայն:

27. Գանձապահների հանձնած դրամական հասույթի կանխիկ գումարի և որվա կամ հերթափոխման հասույթի գումարի (հաշվառիչների, չափալարների, մարկաների, վաճառողների և

կանձապահների դուռս դրած չեկերի ցուցանիշների)՝ միջև տարբերություն լինելու դեպքում, յերեան հանված տարբերությունը (պակասարդ, ավելցուկ) ցույց է տրվում գլուխետորի և գանձապահի ստորագրությամբ զանձապահի համապատասխան մտայանում: Դրամարկղի ստուգման ժամանակ յերեան հանված ավելցուկ դրամքը մուտք է արփում:

Մանր պակասորդները (հաշվեսխայներ) գանձապահը ծածկում է իր հերթական աշխատավարձը ստանալուց վոչ ուշ, իսկ բացառիկ դեպքերում համաձայն սույն «Կանոնների» 100-րդ կետի:

Դրամարկղի ստուգման ժամանակ հայտնաբերված ավել-  
ցուկ զբամը ակտով հանձնվում և խանութի դիրեկտորին և այդ  
գումարի համար դրվում և մուտքի որդելու:

28. Որքա վաճառքից գոյացած դրամը որենքով սահմանված ժամկետին հանձնելու, ինչպես նաև որենքով սահմանված չափով այդ գումարների ծախսման նորմաները պահպանելու համար պատասխանատվություն են կրում խանութիւնի գիրեկառը և հաշվապահը:

29. Վելրագաս առևտրակիան կազմակերպության ղեկավար ները պարտավոր են ստուգել Պետքանկին որվա վաճառքից գոյացած դրամի հանձման համար սահմանված կանոնների պահպանումը և այդ գումարացների ժամանակին մուծումը:

ա) վերադաս կազմակերպության գոմիզող տեղում՝ քաղաքի խանութիւնների վերաբերմամբ որվա վաճառքից գոյացած գումարների մուծումը ստուգվում և ամենորյա զրավոր տեղեկություններով կամ Պետրանիկի ուղարկած որվա վաճառքից գոյացած գումարների մուծման վերաբերող քաղաքաձեններով.

բ) վերադաս կազմակերպության քաղաքից դուրս գտնվող խանութների վերաբերմամբ — պարբերական վերստուգումների միջնորդի:

Խանութիւն կողմից որպա վաճառքից դրյացած գումարի հանձնութիւնը ուղացնելու համար պետք է կատարել հատուկ քննություն և ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ:

30. Որպիս գործառությունների վերտառեկրմանը՝ ավագ գանձապահը (կամ խանութի դիրեկտորը) կազմում և հաշվապահությանն և հանձնում զբամական հաշվետվություննը ԽՍՀՄ Առևտրի ժողովում կոմիտի կողմից սահմանված ձևով։ Հաշվետվություննը իրեն կցված փաստաթղթերով, գանձապահի մոտ պահպանվությունը որինակի վրա կատարված ստորագրությամբ, հանձնվում և գանձապահին։

### III. ԿՇԽԱԶՄՓԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

31. Խանութիներում թույլ են տրվում գործածել կշեռքներ, կշռաքարեր, մետեր և այլ չափի պարագաներ՝ ԽՍՀՄ ժողկում-խորհին կից չափերի և կշիռների գործի կոմիտեյի կողմից սահմանված ստանդարտների և կանոնների համաձայն և զբոշմված նույն կոմիտեյի կողմից:

32. Բոլոր չափողական պարագաները յենթակա յեն պարագիր ստուգման և վերականգնման՝ Զափերի և կղիոների կոմիտեյի որդանների կողմից առնվազն յիրկու տարին մեկ անգամ, բացառությամբ թվացուցային (ցիֆերբալատային)՝ ավտոմատ և էլեկտրավառմատ կշեռքներից, նմանապես նրանց կշռաքարերից, վորոնք ամեն տարի յենթակա յեն վերականգնման:

Խանութիվ գիրեկառը պարտավոր և սահմանված ժամկետ-ներին ներլայցնել բոլոր չափողական պարագաները ստուգե-լու և վերակնքելու համար՝ չափերի ու կշռների դործերի Կոմի-տեհի տեղական որդուներին:

Ծանրության.— 1. Զափերի ապակյա բաժակները (գարե-  
ջը և այլն) նաև արհուճետքերը յենթակա յին պար-  
տադիր ստուգման ու կնքման՝ միայն արտադրությու-  
նից նրանց բաց թողման ժամանակ:

2. Կերպամիւլային կշռաքարերը յենթակա չվիճելով վերակաքման՝ թույլ ե տրվում գործածել մինչև իրենց ճիշտ բարի առաջանումը:

3. Կշեռքները և կշռաքարերը վերանորոգումից հետո՝ յենթակա յենդարապետի վերակնքման:

33. Խանութի գիրեկտորը պարտավոր և ամենուրյա հսկողություն սահմանել չափողական պարագաների ճիշտ ոգտագործման համար, նմանապես պատասխանատու յեւ այդ պարագաները ժամանակին ստուգման և մերակնքման ներկայացնելու:

34. Խանութիներում յեղած կշեռքները, կշաբարերը և մյուս  
չափողական պարագաները պետք եւ ամբացվեն առանձին վաճա-  
ռադին կամ ըրեկագալին, վորոնք պարտավոր են անմիջապես  
տեղյակ պահել խանութի գիրեկտորին չափողական պարագանե-  
րի վերաբերմամբ նկատված թերությունների մասին:

35. Խանութում պետք ե տարվի չափողական պարագաների և նրանց ստուգման ու կնքման ժամկետների հաշվառումը՝ յուս բաքանջյուր չափողական զործիք պետք ե ունենա զույքային

համար, վոր պահպանվում և նրա վրա մինչև այդ գործիքը վորապես գործածման համար անպետք դուրս գրելը:

Յուրաքանչյուր կշեռքի հետ ել պետք և ամրացվի նրա կշռաքարերի կոմպլեկտը և անցագիրը, վորի մեջ նշվում և կնքման, վերանորոգման ժամանակը և այլ անհրաժեշտ տեղեւ կություններ:

#### IV. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

36. Խանութում ստացվող ապրանքներն ընդունում են նյութապես պատասխանատու անձինք, վորոնց առհաշիվ հանձնվում են ապրանքները:

37. Ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող խանութի համար ապրանքներ ստացող ներկայացուցչին տրվում և առանձին հավատարմագիր, վոր վավերացված և լինում խանութի դիրեկտորի և հաշվապահի կողմից, վորի վրա դրված և լինում վստահված անձի խսկական ստորագրությունը:

Ծանօթարբան.— Ինքնուրույն հաշվեկշիռների չափած խանութների ներկայացուցչիներին տրվում և հավատարմագիր վերադաս առեւրական կազմակերպության դիրեկցիայի կողմից:

38. Յերկաթուղային կայարաններից և նավակայաններից ստացվող բեռների ընդունման ժամանակ խանութի ներկայացուցչը՝ ստացած բոլոր փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում պակասուրդը, քաշի տարբերությունը, փչացումը, փաթաթոցի փասովածքը և այլ թերություններ հայտնաբերելուց պարտավոր և պահանջել կայարանից (նավակայանից) կազմել համապատասխան կարգով առեւրական ակտ: Ճանապարհի գործակիլի կողմից ստորագրված ակտի մի որինակը հանձնվում և խանութի ներկայացուցչին: Վերջինս նույն որը հանձնում և այդ ակտը՝ բեռը գուրս գրման և նրա փոխադրման հետ կապված դոկումենտները (յերկաթուղային բեռնագիր, ապրանքաւորանուպորտային առաքագիր) հանձնվում են խանութի հաշվապահության կամ վերադաս կազմակերպության՝ ըստ պատկանելույն:

39. Խանութում ստացվող ապրանքները պետք են մուտքարվի նյութապես պատասխանատու անձննց կողմից՝ անմիջապես, համեստայն զետս վոչ ուշ, քան 24 ժամ ապրանքի ստորագրելու պահից:

40. Ապրանքի մուտքի գրանցման համար ծառայում են հետևյալ գոկումենտները:

ա) մատակարարողներից տրանզիտով ստացված (վերադաս կազմակերպության բաշխող պահեստներից անկախ): և ինքնաշխատմանների կարգով ձեռք բերված ապրանքների համար ռաւելից ապրանքագիր (հաշիվ, առաքագիր): Ապրանքների փաստական ստացման և հաշիվ-փակտուրաների միջև առբերությունների բացակայելու գեպքում՝ հաշիվ-փակտուրաների վրա դրվում և համապատասխան կնիք (ԽՍՀՄ Սուետը, Ժողկումատի կողմից հաստատված ձեռքով), վորը փոխարինում և ընդունման ակտի քաղվածքին:

բ) բաշխող պահեստներից ապրանքներ ստանալիս՝ ապրանքագիր տրամադրության տարածքում կամ լելի ապրանքային բեռնագրեր, վորոնք գուրս են գրվում պահեստի կողմից:

գ) մատակարարներից տանց ուղեկցող գոկումենտների ապրանքներ ստանալիս—առանց դակաւմնենի ստացված ապրանքների վերաբերյալ ընդունման ակտը կազմված խանութի հանձնաժողովի կողմից, վորը բաղկացած և նյութապես պատասխանատու անձից, խանութի դիրեկտորից և հասարակության ներկայացուցչից:

41. Ապրանքների վորակական ընդունումը, վոր կատարվում և խանութում անմիջապես մատակարարողից, պետք և ձեռակերպվի ԽՍՀՄ Ժողկումխորհի 1939 թ. ոգոստոսի 29-ի № 1306 վորշմամբ նախատեսնված այդ ապրանքների ընդունման կարգի ուժամկետների սահմանման՝ վերաբերող՝ «Անհամապատասխան վորակի ապրանքներ մի պետական, տնտեսական, կոռուպերատիվ և հաստրակական կազմակերպությունների կողմից մյուս կազմակերպություններին մատակարարելու վերաբերյալ հատուցող հայցերի ու պահանջների կարգի ու ժամկետների մասին»—հրահանգի հիման վրա:

42. Ապրանքների փաստական ստացման և նրան ուղեկցող գոկումենտի միջև՝ յեղած տարբերության մասին բոլոր գեպքերում կազմվում և սահմանված կարգով՝ առանձին հանձնաժողովի միջոցով ակտ: Հանձնաժողովով կազմի մեջ մտնում են նյութապես պատասխանատու անձը, խանութի դիրեկտորը, բեռը բերող անձնափորությունները՝ վոչ զահագրգրված կազմակերպության ձեռնատես (կոմպետենտ) ներկայացուցչի մասնակցությամբ:

Զհակերպված ակտը հաշվապահության կողմից ուղարմա-

ցիւայի յենթարկելու դեպքում ուղարկվում ե տրանսպորտին, կազմակերպությունը կամ մատակարարողին՝ ընդունման ժամանակ յերկան հանված պակասորդը հասուցելու համար:

Ծանօթարյան. — Բեռը բերող անձնավորությունը մասնակցում ե ապրանքի ընդունմանը միայն այն դեպքում, յերբ փչացված կամ ջարդված ե ընդունվող ապրանքի տարան, վորպիսի հանգամանքը առաջ ե բերում կամ կած ապրանքի պակաս լինելու մասին:

43. Նյութապես պատասխանատու տնձնավորությունների կողմից ստացված ապրանքները ժամանակին մուտք անելու համար հսկողություն սահմանելու նպատակով, բոլոր ասզրանքային ըեռները, անկախ նրանց ստացման աղբյուրներից, խանութում ընդունելու պահին դիրեկտորը պետք ե գրանցի «ստացվող ապրանքների գրանցման ժամանում», վորի մեջ նշվում են ապրանքի ստացման ժամանակը, ապրանքների անունը, բեռների անդերի քանակը, մատակարարողի անվանումը, ապրանքային դոկումենտի համարը, գոկումների գումարը և ապրանքը ստացող սեկցիան:

Հաշվապահը ստանալով խանութի նյութապես պատասխանատու անձից ամենորյա ապրանքային հաշվետվություններ, ստուգում ե նրա կողմից ստացված ապրանքների գրանցումը, կատարելով աշխատանքի վերջին «ստացված ապրանքների գրանցման ժամանում» նշումներ:

#### V. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

44. Ապրանքն ընդունելուց հետո՝ նրան պետք ե պահել խանութում այսպես, վոր ապրանքը չկորցնի իր նախնական հատկությունը և վորությունը նա ապահոված լինի հափշտակումից:

45. Ապրանքը պետք ե պահելի խանութի առևտրական սրահին կից գանգող ոժանդակ շենքում կամ ներքնահարկերում, հատակների վրա կամ այդ ապրանքի համար հարմարեցված հատուկ տեղերում կամ դարսարաններում, վորոնց վրա քաշվում են հատուկ ծածկոցներ:

Ապրանքը պետք ե պատից հետու լինի կամ ազատ տարածությամբ կամ տախտակայ պատվարներով, վահանապատով, իսկ հատակին դարսելու դեպքում պետք ե հետու պահվի փողոց:

\*20 սմ. վոչ պակաս:

46. Ապրանքի պահպանման պայմանները (ջերմաստիճան,

խոնավություն, լույս, սպափախություն և այլն), պետք ե համապատասխանեն յուրաքանչյուր ապրանքի տեհնուողիական հատկության պահանջներին:

47. Շուտ փչացող մթերքները (միս, ձուկ, կաթնային մթերքները) պետք ե պահել սատցարաններում, զովացրած կտմերաներում, սառը պահարաններում կամ ցած ջերմաստիճան ունեցող և լավ հավահարվող շենքերում:

Միաց, ապուխտաները, յերշիկները և նման մթերքները պետք ե կախել կրոնշտեցներից և կախարաններից:

Հեղուկ և կիսահեղուկ մթերքները (կաթ, բուսական յուր, սինետու, մեղր և այլն) պետք ե պահել ամրություն ամրությունում:

48. Վոչ շուտ փչացող մթերքները (թեյ, շաքար, կըռուզա, մակարոն և այլն) պահվում են սովորական պահեստային շենքերում, վորոնք ունեն չոր, շուտ հովահարվող և ջուր չծծող կտուրները: Նման ապրանքները պահվում են սովորական դարակների վրա կամ հատակի վրա փռած վրաքաշիների տակ, ամրաներում, արկղներում:

49. Կրակից բոնկվող ապրանքները (բենզին, կերոսին և այլն) պահվում են մեմբրայի բիդոններով և բակերով՝ առանձնացված շենքերում, վորոնք ունեն դուրս քաշող սարքավորված հանիչներ:

50. Տականներով ապրանքները (սելի, ձկնեղին) գասավորվում են պահել պիճակում և շուտ են տրվում 5—8 որը մեկ անգամ:

51. Խանութը պետք ե ապրանքներն ոժանդակ շենքում գտառավորի այն կարգով, վոր ամեն ապրանք ունենա իր մշատական տեղը: Ըստ վորում պետք ե այնպիս անել, վոր նոր ստացվոծ ապրանքը չծածկի նըրանից առաջ ստացված ու դարսված ապրանքին: Ապրանքի ծախումը պետք ե կատարվի այն հաշվով, վորպեսզի միանման վորակով միատեսակ ապրանքները ոժանդակ շենքից գուրս բերվեն առևտրական սրահ՝ համապատասխան այդ ապրանքների խանութ համեմություն ժամկետներին:

52. Ոժանդակ շենքում ապրանքները տեղավորելիս արգելվում ե կողմանակի հոտել հեշտ ընդունող պարանքները (թեյ, կենդանական յուր, կրուպաներ և այլն) գարսել սուր ունեցող ապրանքների կողքին (սելի և այլն):

53. Ապրանքի տարան պիճակ և խնայողաբար պահել նրա

համար, վորապեսդի հնարավոր լինի այդ տարայից յերկրորդ անգամ ողանվել՝ նրանց ժամանակին և կանոնավոր վիճակում հանձնելով մատակարարողին կամ տարայի վերանորոգման բարձային:

54. Ապրանքներ պահվող շենքերում պետք ե ունենալ կրակմարիչներ և ուրիշ հակառազեհային հարմաքություններ՝ հրշեցալին պահպանության կողմից սահմանված կանոններին խիստ համապատասխան:

55. Ապրանքը մինչև վաճառատեղ հասնելը՝ այն պետք ե մանրամասնորեն նայվի և համապատասխան տեսք տրվի:

56. Խանութի բաց թողման կարողությունն ավելացնելու և վաճառողների աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով՝ խանութի դիրեկտորը պետք ե կազմակերպի ապրանքների նախնական կցում և փաթեթում, ինչպիսիք են՝ շաքարը, կրուպաները, մակարոնները, կաթնամթերքները և այլն:

## VI. ՆՅՈՒԹԱՊԵՍ ՊԱՏԱՄՆԱՆՍՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

57. Խանութների նյութապես պատասխանատու անձինք (խանութների դիրեկտորները, բաժինների, սեկցիաների վարիչները) պարտավոր են ամեն որ հաշվետվությունների հաշվապահությանը՝ սահմանված ձևով: Հաշվետվությունները կազմում են նյութապես պատասխանատու անձինք, իրենք ստորագրում և ներկայացնում են հետևյալ գործառքային որվա ժամը 12-ից վոչ ուշ: Սեկցիաների վարիչներն իրենց հաշվետվությունները ներկայացնում են խանութի դիրեկտորի միջոցով:

58. Հաշվետվությունների մեջ գրանցվում ե յուրաքանչյուր դոկումենտն առանձին՝ ցույց տալով ամսաթիվը, դոկումենտի համարը, ապրանքի և տարայի վաճառքի գինը:

Զի թույլատրվում հաշվետու որվա ապրանքների մուտքն ու յերեք ձևակերպող վորսե փաստաթղթի ուշացումը, ապրանքային հաշվետվության մեջ ստացված ապրանքի չգրանցումը:

Բոլոր փաստաթղթերը, վորոնց հիման վրա կազմում են հաշվետվությունները, կցվում են վերջիններին և հանձնվում են հաշվապահությանը՝ ստանալով վերջինից ստորագրություն նյու-

թապես պատասխանատու անձի մոտ մնացող հաշվետվության յերկրորդ որինակի վրա:

59. Հաշվապահությունը ստանալով նյութապես պատասխանատու անձերից հաշվետվություններ՝ պարտավոր ե հաշվետվությունների ստացման որը ստուգել այդ հաշվետվությունների ճիշտ լինելը, նմանապիս ստուգել հաշվետվություններին կցված փաստաթղթերի ճշտությունը: Համապատասխան այդ բարին հաշվապահությունը պետք ե ստուգի:

ա) հաշվետվությանը կցված դոկումենտների ձևակերպման ճշտությունը.

բ) ապրանքների բացթողման և մանրածախ գները բոլոր դոկումենտներով.

գ) տարայի ամրժեքը մատակարարողների հաշիմների մեջ բոլոր փաստաթղթերի հետ միասին, և տարայի մուտք արված արժեքը ձեռնարկության կողմից, նմանապիս այն տարայի պարտադիր մուտք արվելը, վոր ստացված և ապրանքի հետ, բայց հաշիմների մեջ նրա արժեքն առանձին չի ցույց տրված (կոմսերով, ձկի և ուրիշ տարաներ):

դ) փաստաթղթերի գնորոշումը (տակսիրօվկա).

յի) նախորդ ապրանքային հաշվետվության մնացորդի փոխանցման ճշտությունը, հաշվետվությունների թվաբանական հաշվման ճշտությունը և յելույթի մնացորդի հանումը.

զ) իրացված ապրանքների գումարի համապատասխան լինելը գրանցելի հաշվետվության ցուցանիշներին.

հ) նյութապես պատասխանատու անձի կողմից ստացված բոլոր ապրանքների ժամանակին մուտքավորումը և գրանցումը հաշվետու որվա հաշվին:

Ծանօթարյան:— Խոշոր արդյունաբերական ապրանքներ և մեծ ասորտիմենտ վաճառող խանութներում ապրանքների և տարայի գները ստուգում ե հատուկ աշխատուղը (կալկուլյատոր):

Կատարված ստուգման մասին դոկումենտների և հաշվետվությունների վրա կատարվում են համապատասխան նշումներ՝ հաշվետվությունը ստուգող աշխատադրությամբ:

60. Ստուգման ընթացքում հաշվետվության մեջ նկատված սակագնի, համրման և զոկումնեների գրանցումների սխալները, հաշվապահությունն ուղղում ե՝ ջնջելով սխալ գրանցված գումարները և նրանց վրա գրելով ճիշտը:

Կատարված ստուգումների ճշտությունը պետք ե հաստատվի

գրավոր վերապահումով նյութապես ուստասխանատու անձի հաշվետվության վրա: Վերադաս կազմակերպության հաջլապահությունը հաշվառման կենտրոնացման ժամանակ, հաշվետվությունների վրա ուղղումներ արգած դեղքում հայտնում ե այդ յասին հատուկ ծանուցաբով նյութապես պատասխանատու անձանց:

61. Հաշվետվություններից դուրս բերված ապրանքների գրանցված մնացորդները հաշվապահությունն ամեն որ համեմատում ե ապրանքային պաշտրների սահմանված լիմիտերի հետ և նրանց առանձին շեղումների մասին, վոր կատարվել ե առանձին սեղիաներում, հազորդվում ե գրավոր կերպով խանութի դիրեկտորին՝ համապատասխան ոպերատիվ միջոցները ձեռք առնելու համար:

## VII. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԱԿՑԱՎՈՐՄԱՆ ԿԵՐՊԸ

62. Ապրանքների կորուստները, վորոնք առաջ են գալիս կոտրվածքից, ջարդվածքից, խոտանից և փչացումից, ապրանքները պահելու և խանութին բաց թողնելու ժամանակի, նմանապես անհրաժեշտ դեպքում տարայի քաշի տված տարբերությունը ձեւակերպվում ե առանձին ակտերով:

63. Կտտերը կազմում ե հանձնաժողովը, վորը բաղկացած է վերադաս կազմակերպության ներկայացուցչից, խանութի դիրեկտորից, հասարակայնության ներկայացուցչից և նյութապես պատասխանատու անձից: Վաճառքի համար անպետաք պարենային ապրանքների վիճակը վորոշող (նրանց մշակման կամ վոչնչացման համար) հանձնաժողովին մասնակցում են, բայց վերոհիշյալ ներկայացուցիչներից, նաև սանիտարական վարչության կամ սպանիտարական հակողության ներկայացուցիչը: Տարայի թերթեորի մասին ակտը կազմելիս՝ նրան մասնակից են դարձվում նաև այն անձինք, վորոնց հրավիրելը նախատեսնված ե մատակարարողների հետ կնքված պայմանագրերի մեջ:

64. Հանձնաժողովը հրավիրում ե խանութի դիրեկտորն այն որը, յերբ սահմանվում ե ապրանքների ջարդվածքի, կոտրվածքի կամ խոտանի չափը և հանձնաժողովը՝ պարտավոր ե ակտ կազմելու համար հավաքվել հրավիրումից մեկ որից վոչ ուշ:

65. Աքցանագրվող ապրանքների կշռումը և վերահաշվումը կատարվում ե նյութապես պատասխանատու անձի կողմից հանձ-

նաժողովի անդամների ներկայությամբ, վորոնք ստուգում են կշռ և հաշվառը, մասնակցելով վերահաշվումը:

66. Արձանագրված կորուստները գուրս ե գրվում այն նյութապես պատասխանատու անձանց հաշվից, վորոնք մեղավոր են ապրանքների անկանոն պահպանման, անփույթ վերաբերմունքի, ժամանակին կորուստները չկանխելու, միջոցներ ձեռք չառնելու և նման պատճառների համար, որինքի սահմանված կարգով հատուցելով խանութին հասցեած թասը:

67. Բոլորովին անպիտք և ակտերով գուրս գրված տպրանքները յինթակա յեն խոնճութից հունվելու և վոչնչացվելու վերադրու կազմակերպության ներկայացուցչի ներկայացուցչի այդ սակագներում նրանց համար հատկացված աղբատեղը (Свалка) կամ, տպրանքների սակավ քանակության դեպքում, այրման կամ այլ միջոցով կազմելով այդ մասին համապատասխան ակտ:

68. Կշռի տարբերություն անպայմանորեն պահանջող ամրող տարրան պիտք և ողարտադիր կերպով հաշվի առնվի և գրանցվի առանձին մատայանում, ինչպէս Առեւրի ժողկութանի ուսկեած ձևով: Կշռի տարբերության մասին կազմած ակտերի հիման վրա, ոյզ մատյանում նշվում ե տարայի կշռի տարբերության մասին:

69. Տարայի կշռի տարբերությունը վորոշվում ե գատարկ ատարայի ընդհանուր կամ առանձնակի (մատակարարողի հետ կնքված պայմանագրում նախատեսնված պայմանների համաձայն) վերակռում միջոցով: Կազմվող ակտերի ժամկետները վորոշվում ե մատակարարուների հետ ենթած պայմանագրերի համաձայն, իսկ յերբ ժամկետները ուղարկած պայմանագրերում չեն նախատեսնված, այդ գեղքում կշռի տարբերությունը վորոշվում ե տարայի գատարկելուց 10 որից վոչ ուշ, իսկ թաց մթերքների վերաբերմամբ (պուլիղը, մուրարա, սիրտ և այլն)՝ տարան գատարկելուց տնմիջապես հետո:

Կշռի տարբերությունը վորոշվելուց հետո տարայի վրա արվում ե պարզ նշում (ներկով, քիմիական մատիտով) այն մասին, վոր կշռի զանազանությունը ստուգված ե (ցույց տալով կազմված ակտի ամսաթիվը և համարը):

70. Կազմված ակտերի տակ ստրագրում են հանձնաժողովին մասնակցող բոլոր անդամները: Հանձնաժողովի յեղակացու-

թյանը չհամաձայնվելու դեպքում՝ նյութապես պատասխանառու անձը գրում և իր բացարությունը ակտի մյուս յերեխն:

71. Զնշել և ուղել ակտը չի թույլատրվում: Ակտի մեջ մտցված բոլոր ուղղումների մասին գրում և ծանուցում ակտը ստորագրող բոլոր անձանց ստորագրությամբ:

72. Կազմված ակտի մի որինակը վերադաս կազմակերպության ներկայացուցիչը հանձնում և խանութի հաշվապահության ստանալով նրանից ստորագրություն՝ ուղարկված գրության վրա կամ նրան փոխարինող ուրիշ փաստաթղթով: Ակտի յերկրորդ որինակը հանձնվում և խանութի հաշվապահությանը նյութապես պատասխանառու անձի միջոցով՝ ապրանքային հաշվետվության ժամանակ:

73. Խանութի հաշվապահը պարտավոր ե՝

ա) տկան ընդունելիս մանրազնին ստուգել ակտերի ձեւվակերպման ճշտությունը համաձայն վերելում հիշյած պահանջների:

բ) գրանցել ապրանքների կորուստների ու խոտանի մասի և տարայի կշեռքի տարբերության վերաբերյալ կազմված ակտերը ԽՍՀՄ Առեւտրի Ժողկումատի կողմից կազմված ձևով:

գ) հարյուր սուբլուց ավելի արժեք ունեցող յուրաքանչյուր ակտը, գրանցելով համալատասխան մատյանում, մեկ որից վոչ ուշ հանձնել վերադաս կազմակերպության ղեկավարին, նրա հաշվողությանը և հաստատմանը:

Ծանոթաբարություն.— Կենտրոնացված կարգով հաշվառման ժամանակ ակտերը հանձնվում են վերադաս կազմակերպության հաշվապահությանը և նրա գրանցումից հետո՝ տրվում և նույն կազմակերպության ղիբեկտորին հաստատելու համար:

74. Արձանագրված կորուստների և տարայի կշուր տարբերության գումարները, ինչնուրույն հաշվեկշռությունը ունեցող խանութներում, գուրս են գրում համաձայն կազմված ակտերի, վորոնք հաստատվում են այդ խանութների ղիբեկտորների կողմից (յեթե միայն ղիբեկտորները նյութապես պատասխանառու անձնագրություններ չեն): Հարյուր սուբլուց ավելի ակտերը յենթակա յեն վերադաս կազմակերպության ղեկավարների հետագա հաստատմանը, վերադաս կազմակերպության ղեկավարի կողմից տնտեսաշվարկային խանութի ղիբեկտորի վորոշումը չհաստատելու դեպքում, տվյալ խանութի հաշվապահությունը կատա-

րում և բարձրացնելու հաշվետվության մեջ համապատասխան ուղղվելիք գրանցումներ՝ հետագայում այդ մասին գրավոր կերպով հաղորդելով նյութապես պատասխանառու անձին:

75. Ինքնուրույն հաշվեկշռի անցած խանութների գիրեկարուները ակտը կազմելիս պարտավոր են վորոշել և տալ գրավոր ցուցմունքներ այն մասին, թե արդյոք հաշվից պետք է գուրս զրվի արձանագրված կորուստը՝ ձեռք առնելով իրենց ստորագրած ակտերից բղիսող անհրաժեշտ միջոցները (յենթարկել կարգապահական տուժի կամ կանչել դատական պատասխանաբառության և այլն):

Մի հարյուր սուբլուց ավելի արժեք ունեցող ակտը՝ վերաբարայի կազմակերպության ղեկավարին հաստատման համար ներկայացնելիս պետք է քննվի նրա ստացման յերկրորդ որվա ընթացքում:

### VIII. ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՅՆԵՐԻ ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱՆ

76. Խանութներում աղբանքանյութական արժեքների ինվենտարիզացիան կատարվում և վերադաս կազմակերպության համաձայն: Խստիվ կերպով արգելվում և տեղիկացնել խանութի աշխատողներին նախատեսնված ինվենտարիզացիայի ժամանակի մասին:

77. Ինվենտարիզացիան տարբեր ձեսնաբեկներում կատարվում ե՝

ա) գործարքային՝ գրամարկներում գրամական-կանխիկ գումարի վերաբերմանը, ամեն որ, իսկ գլխավոր գրամարկներում ամելաբ առնվազն յերկու անգամ:

բ) աղբանքները—ուղարկենային և մանր—արդյունաբերություն խանութներում առնվազն ամիսը մեկ անգամ, միջին և խոշոր արդյունաբերական և խանութներում (պարենա-արդյունաբերական)՝ առնվազն յեռածյակում մեկ անգամ:

Ծանօթաբարություն.— 1. Միատեսակ աղբանքներ ունեցող սեկցիաներում կամ բաժիններում աղբանքների մասցորդների հանման ստուգումը, վերպես կանոն, կատարվում և միաժամանակ:

2. Աղբանքների մասցորդների հանումը կատարվում և գրամարկային կանխիկ գումարի և տարայի ինվենտարիզացիայի հետ միաժամանակ:

գ) Հիմնական միջնացների, ստկավարժեք և շուտ մաշվուդ տառարկաների և արտհագուստի բնվենտարիվացիան կատարվում և առնվազն տարեկան յերկու անգամ:

78. Համաձայն ԽՍՀՄ ժողովածխորհին կից Տնտեսական Խորհրդի 1938 թ. ապրիլի 9-ի № 185 վորոշման, ինվենտարիվացիան պետք է կատարվի հանգստյան որերին կամ արտաժամյա, պրակտիկա դարձնելով խանութների վերահաշվառումն ըստ բաժինների (ոհեցիաների):

Առանձին գեղքերում, յերբ արժեքների ինվենտարիվացիան մի սրում չի աղարավում, այդ դեպքում ինվենտարիվացիան անցկացնող անձնները՝ միասին զուրու և զալիս խանութի շենքից: Տվյալ շենքը կողպատմ և կամ յերկու առըբեր կողպեքով (այդ գեղքում մի կողպեքի բանալին մնում և ապրանքանյութական արժեքների պատասխանառու անձի մոտ, իսկ մյուս կողպեքի բանալին մնում և այն անձի մոտ, վորը կատարում և ստուգումը) կամ մի կողպեքով այդ գեղքում շենքը կնքվում և այնուն վոր ինքը կամ պլոմբիրը փորով կնքվում և շենքը, մնան ստուգումը հատարող անձի մոտ, իսկ բանալին ուղանքում և նյութապես պատասխանառու անձի մոտ:

79. Ապրանքանյութական արժեքների ինվենտարիվացիան կատարվում և հատուկ հանձնաժողովի միջոցով, վորի կազմը բաղկացած է՝

ա) վերադաս կազմակերպության ներկայացուցչից,

բ) նյութապես պատասխանառու անձից,

գ) հաշվապահության ներկայացուցչից:

Այն գեղքում, յերբ խանութը չունի իր հաշվառու աղարատը, իսկ վերադաս կազմակերպության հաշվառահությունը հնարավորություն չունի այդ աշխատանքի համար նշանակել իր ներկայացուցչին, վերադաս կազմակերպություն զեկավարը նշանակում և ինվենտարիվացիան հանձնաժողովի յերբորդ անդամին՝ ինվենտարիվացիայի յենթարկվող խանութի աշխատությունուն:

Հանձնաժողովը նշանակվում է վերադաս կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ՝ նշելով ինվենտարիվացիայի ծավալը, սկիզբը և աշխատանքի ավարտման ժամկետը:

80. Ապրանքների արժեքների ինվենտարիվացիային անցնելով՝ հանձնաժողովը նախորոք հանում և դրամական միջոցների կանխիք մատուցում դրամարկղներում, պարզում և ընթացիկ որդա-

տուելուց գոյացած գումարը, վերցնում և վերջին դրամական հաշվեավությունն ավագ գանձատականից կամ խանութի դիրքեկտորից և վերջին ապրանքային հաշվեավությունները նյութապես պատասխանառու անձից, հանելով ինվենտարիվացիայի պահին մայած արժեքներն ըստ գրանցման մատյանի:

81. Գրանցման մատյանի ապրանքային մատյառգի յիշությունը հետ միաժամանակ ինվենտարիվացիայի պահին հանձնաժողովը վերցնում և նյութապես պատասխանառու անձից ստորագրություն հետեւյալ բավանդակությունը:

«Յիս, ներքո ստորագրյալս, տալիս եմ սույն ստորագրությունն այն մտում, վոր ինվենտարիվացիայի սկզբում բոլոր ապրանքների յիշությունը մտից փաստաթղթերը գրանցված են ապրանքային հաշվեավությունն մեջ, վորը հանձնընված և հաշվապահությանը և ինվենտարիվացիայի պահին բոլոր ստացված տղթանքները գրանցված են, գտնվում են իմ պատասխանառություն տակ, մուտք են արված և իմ ձեռքին վոչ մի ձեռնիերպված փաստաթղթով՝ չկա»:

«Բայց թողնված ապրանքները դուքս և գրված գործես յիշը, մտյանով իմ գրանցմանը մատյառգիները ինվենտարիվացիայի պահին կազմում են . . . և գումար»:

Ստորագրությունը արվում և ապրանքային հաշվեավությունն որինակի վրա:

82. Ինվենտարիվացիայի ժամանակ բոլոր արժեքները վերահաշվառում, վերակշռում, վերտչափում և նյութապես պատասխանառու անձի կողմից, հանձնաժողովի ներկայությամբ, վորը ստուգում և հաշվառման վերտչափման հաշությունը և այլն:

83. Կազմած ցուցակների մեջ պետք և պարզունակ նշեն ապրանքների անունները, նբանց նաև նշանակառություն համարները, զրամը, տեսակը և մյուս ապրելող նշանները, վարանցով վորոշվում և ապրանքների գներն ըստ պերսիստաբանների:

84. Տարայով կօված ապրանքների համար ցույց են արդ վրացում թաքերը:

85. Խանութում գննդապաշտը և պառկած, վոչ վերժեք ապրանքների առկայության գեղքում, այդպիսիք չեն գրանցվում ապրանքների հիմնական ցուցակում, այլ նրանց համար կազմում են հատուկ ցուցակ, վոր բաղկացած և հետեւյալ ստորագրաժամանակներից: ա) պառկած սակագ վաճառվող ապրանքները, բ) վոչ վերժեք ապրանքները: Այդ ցուցակի վրա հաշվառնվազ

խանութիւ գիրեկատը գրում և իր նկատառութիւնները այդ ապրանքների ողտագործման (իրացման) ձեռնարկութիւնների և ժամկետների մասին:

Բոլորովին անպետք ապրանքները չեն գրանցվում փաստական մնացորդների ցուցակում: Այդ ապրանքների մասին ինվենտարի հաջացիա կատարող հանձնաժողովը կազմում ե արձանագրություն (ԽՍՀՄ Առևտրի Ժողկոմատի կողմից սահմանված ձևով), հայտնաբերելով ապրանքների փչացման պատճառները և ցույց տալով այդ գործում մեղավոր անձանց:

Արձանագրված անպետք ապրանքները յենթակա յեն վոչլնչացման՝ ինվենտարի փացիոն հանձնաժողովի ներկայությամբ:

86. Մնացորդի հանձնման ժամանակ խանութում ստացված ապրանքները ընդունում են նյութապես պատասխանատու անձինք՝ ինվենտարի փացիոն հանձնաժողովի ներկայությամբ:

Այդ ապրանքները դրանցվում են առանձին ցուցակում, վորպես «ինվենտարի փացիայի ժամանակ ստացված ապրանքներ», Ցուցակի մեջ ցույց ե տրվում, թէ ապրանքն ունից ե ստացված, ամսաթիվը և ուղեկցող փաստաթղթի համարը: Միևնույն ժամանակ ապրանքային փաստաթղթի վրա դրվում ե հանձնաժողովի ստորագրությամբ մակագրություն, նշելով այն ցուցակի համարը, փորի մեջ գրանցված են այդ արժեքները:

Մնացորդները դուրս բերելու ժամանակ ստացված ապրանքները չեն գրանցվում ապրանքային հաշվետվությունների մեջ (ինվենտարի փացիայից առաջ հանձնաժողովներին հանձնված) և ինվենտարի փացիայի մոմենտին գրքի մնացորդի մեջ չի մտնում: Հաշվապահությունը փաստական մնացորդները հաշվապահական տվյալների հետ համեմատելիո, ինվենտարի փացիայի ընթացքում ստացված և գրանցված ապրանքները, ինչպես ցույց ե տրված վերևում, առանձին տեղեկագրի մեջ, ստուգված՝ ապրանքների մնացորդների մեջ չի հաշվում:

87. Վաճառված ապրանքները (մեծաքանակ, մասր-մեծաքանակ), դուրս գրված նարյադ-փակուրայի համաձայն առվագման համար նախապարասատված, գնորդի կողմից վճարված, բայց մինչև ինվենտարի փացիան չտարված ապրանքները նույնպես յենթակա յեն ինվենտարի փացիայի և գրանցվում են առանձին ցուցակում: «Ինվենտարի փացիայից առաջ վաճառված, բայց չտարված ապրանքներ» անվան տակ:

Այդ ցուցակում, բայց ապրանքների անուններից, ցույց են տրվում գնորդների անունները, վորոնց տվյալ ապրանքները վաճառված են, ամսաթիվը և նարյադ-փակուրայի համարը, դուրս դրված հաշվետվութիւնների համարները և նրանց վճարման ամսաթիվը: Այդ ապրանքների բաց թողման վերաբերող փաստաթղթերը, դրանցվում են ապրանքային հաշվետվության մեջ և հանձնվում են հաշվապահությանը, դուրս գրելու վաճառված ապրանքները նյութապես պատասխանատու անձանց հաշվետվութիւնից: Վաճառված և գնորդների կողմից նրանց արժեքները վճարված ապրանքները հաշվում են վորպես ողակ դրված գույք և համաձայն դույքավորման ցուցակի ցույց ե արվում առանձին հոդվածով հաշվեկշռից դուրս:

Այս ապրանքները, վորոնք համաձայն դուրս գրված նարյադների պատրաստված են առաքման, բայց գնորդների կողմից այդ ապրանքների արժեքը չի վճարված և մինչև ինվենտարի փացիան չի դուրս տարված, այդ ապրանքները ստուգման ժամանակ մտցվում են ընդհանուր գույքավորման ցուցակում վորպես խանութի սեփականություն (այսինքն՝ չվաճառված ապրանքներ):

88. Հիմնական միջոցների գույքավորման ժամանակ ցուցակների մեջ գրանցվում են բոլոր կանխիկ գույքային արժեքները, ինչպես տվյալ խանութին պատկանող, այնպես ել նրա մոտ վարձակալով գտնվող գույքերը, վերջինները գրանցվում են առանձին ցուցակների մեջ:

89. Ստուգված ապրանքա-նյութական արժեքները գրանցվում են ցուցակների մեջ, վորոնք կազմվում են յերեք որինակից: Գույքացուցակներից մի որինակը լրացնում և նյութապես պատասխանատու անձը, իսկ մյուս յերեկու որինակը պատճենահանով լրացնում ե հանձնաժողովի անդումներից մեկը: Ցուցակների լրացման ընթացքում կատարվում ե յուրաքանչյուր գրանցման թերթի փոխադրձ ստուգում և ստուգման ժամանակ յերեկուն հանված տարբերության դեպքում անմիջապես կատարվում ե արժեքների գնահատում, վորոնց հիման վրա տուաջացել են այդ տարբերությունները:

Ցուցակները կազմվում են ԽՍՀՄ Առևտրի Ժողկոմատի կողմից սահմանված ձևերով: Ցուցակների բոլոր որինակները համարվում են իսկական:

Ծանօթարյուն.— Նյութապես պատասխանատու սնձանց կողմից բաժնին կամ սեկցիային ցուցակները հանձնելիս կազմվում են չորս որինակից:

90. Ապրանքների ցուցակները կազմվում են պարզ և զորոշ՝ առանց չնշման և յեղծման։ Բոլոր ուղղումները կատարվում են կազմված ցուցակների բոլոր որինակներում, չնշելով սխալ գրանցումները և կատարելով վերևից անհրաժեշտ ուղղումներ։ Ուղղումները կատարվում են հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրություններով։ համապատասխան նշումներով։

91. Ինվենտարիզացիան ավարտելուց հետո ցուցակների վրա ցույց և արվում (բառերով գրված) ապրանքների համարների թիվը ըստ կարգի։ Ցուցակների բոլոր որինակների վրա ստորագրում են ինվենտարիզացիա կատարող հանձնաժողովի անդամները։

Ինվենտարիզացիոն ցուցակների վերջում հանձնաժողովը վերցնում և նյութաղիս պատասխանատու անձնավորությունից ստորագրություն հետևյալ բոլանդակությամբ։

Անվենտարիզացիոն ցուցակի մեջ հիշված բոլոր արժեքները թե՛ք քանակի և թե՛ք կշռի տեսակետից հանձնաժողովը նշումների կամ ներկայությամբ լրականապես ճիշտ, չի յեղել այլ արժեքների բաց թողում, վորի առնչությամբ ինվենտարիզացիոն հանձնաժողովից վոչ մի պահանջ չունեմ։ Ցուցակում գրանցված և հաշված գումարի արժեքները գտնվում են իմ պատասխանատվության պահպանման տակ։

92. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը, նաև նյութաղիս պատասխանատու անձը, ինվենտարիզացիայի ժամանակի առաջացած տարածայնության դեպքում իրավունք ունի ստորագրելու ժամանակ։ Նշել իր համապատասխան դիտողությունները։

93. Հաշված և հանձնաժողովի կողմից ստորագրված ինվենտարիզացիոն ցուցակները համարակալվում են և նրանց հիման վրա յերկու որինակից կազմվում ամփոփագիր։ Ամփոփագրի մեկ որինակը, ցուցակի հետ յիշախին, վերադաս կազմակերպության ներկայացուցչի միջոցով, վորտիս կոնտրոլ որինակ, հանձնվում է դիեկցիային։

Ամփոփագրի յերկրորդ որինակը ինվենտարիզացիոն ցուցակների հետ միասին, նյութաղիս պատասխանատու անձանց լրացումների հետ միասին՝ ինվենտարիզացիայից մեկ որից վուշ ուշ վերադաս կազմակերպության ներկայացուցչի միջոցով՝ հանձնվում է հաշվագրությանը։

Եթերորդ որինակը, վորը լրացվում է հանձնաժողովի ան-

վամներից մեկի կողմից, հանձնվում և նյութաղիս պատասխանատու անձին ի պահ։

94. Ապրանքների վերահաշվառումից հետո, յեթե նյութաղիս պատասխանատու անձը հայտնաբերում է այն փաստը, վոր պակասորդը կամ ավելցուկը հետևանք ե պարզուոշ սխալի՝ ապրանքի անվան (կամ տարայի) վերաբերմամբ, վորեւ ապրանքի (կամ տարայի) չըրանցվելու, թվաբանական սխալի և այլ գեղագիրի հետևանքով՝ նյութաղիս պատասխանատու անձին իրավունք և վերապահվում ինվենտարիզացիան ավարտելուց մեկ որից վոչ ուշ տալ հիմնավորված զրագոր դիմում, պահանջելով ստուգում կամ կրկնակի հաշվառում կատարել՝ թույլ տրված սխաներն ուղղելու նպատակով։

Վերադաս կազմակերպության ղեկավարը, վորի առեարաշի կամ ցանցի մեջ և մտնում այդ խանութը, նշանակում է դիմումի մեջ հայտարերված փաստերի ստուգում և այդ փաստերի հաստատվելու դեպքում, դիմումից յերեք որից վոչ ուշ, անում է կարգադրություն՝ ռւղղել մատնանշված տարբերությունները կամ կրկնին անդամ ինվենտարիզացիա կատարել։

Ապրանքների մնացորդների ցուցակադրման ժամանակ թույլ տրված անփթության հետևանքով կրկնակի հաշվառում պահանջելու դեպքում ինվենտարիզացիոն հանձնաժողովի անդամները յենթակա յին կարգավահական տուժի, իսկ քրեական գործողությունների առկայության դեպքում յեղած նյութերը հանձնվում են քննչական մարմիններին։

95. Մանութի կամ՝ վերադաս կազմակերպության հաշվառությունը (կենտրոնացած հաշվառման դեպքում) ապրանքների ցուցակները ստանալիս, ստուգում և հանձնաժողովի կողմից դրագած ապրանքների և տարայի գները, անանձին ապրանքների ընդհանուր գումարը և ընդհանուր ցուցակի գումարը, հաշվարկում և վաճառած ապրանքների ընտելան պակասորդների չափն ըստ հաստատված նորմաների հաշվետու ժամանակամիջոցում, վորից հետո գուրս և բերում գրացուցակով, ապրանքների փաստական մնացորդները համեմատելով ապրանքային մատյանների հետ։

Ծանօթարյան. — Արդյունարերական ապրանքներ վաճառող և լայն ասորտիմենտ ունեցող խանութում ապրանքների և տարայի գներն ստուգում և հատուկ աշխատող (կալկուլյատոր)։

96. Հաշվապահությունը պարտավոր ե ինվենտարիզացիայի վերջնական արդյունքը դուրս բերել ինվենտարիզացիայից յերկու որից վոչ ուշ:

Ինվենտարիզացիայի արդյունքի մասին կազմվում ե հատուկ ակտ ԽՍՀՄ Առևտի ժողովամասի կողմից սահմանված ձևով:

Փաստական և հաշվապահական մատյանների մնացորդների տարրերությունների առկայության գեղքում, հաշվապահությունը պարտավոր և պահանջել նյութապես պատասխանատու անձից ըստ հյության գրավոր բացատրություն այդ տարրերությունների մասին և ստուգել նյութապես պատասխանատու անձի հետ միասին հաշվապահական մատյաններում գրանցումների ճշությունը:

97. Գույքավորման արդյունքները նյութապես պատասխանատու անձի գրավոր բացատրության հետ միասին հանձնվում ե վերադաս կազմակերպության դեկավարին ի տնօրինություն:

Ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող խանութներում գույքավորման արդյունքները հանձնվում են խանութի դիրեկտորին ի տնօրինություն:

Վերադաս կազմակերպության կամ խանութի դիրեկտորը պարտավոր ե յերկու որփա ընթացքում քննել ինվենտարիզացիայի արդյունքները և յերեան հանված պակասորդների վերաբերմամբ տալ համապատասխան կարգադրություն մանը պակասորդների հանցցման մասին՝ համաձայն ԽՍՀՄ ժողովակորմի 1936 թվի հոկտեմբերի 9-ի № 1825 վորոշման, անցկացնել առանձին գեպքերում կրկնակի ստուգումներ, հեռացնել աշխատանքից մեղավոր անձանց և զործը հանձնել դատարան՝ կանչելով նրանց քրեական պատասխանատվության՝ համաձայն ԽՍՀՄ Արդարադատության ժողովամատի և Դատավագության 1939 թվի փետրվարի 28-ի № 49/1-ա. հրահանգի, վորը կցված ե սույն կանոններին:

Ծանոթության.— 1. Արգելվում ե վերահաշվառման ժամանակ յերեան հանված պակասորդները կամ ավելցուկները ծածկել ի հաշիվ նախորդ կամ հետագա վերահաշվառման ավելցուկների հաշվին:

2. Սիկցիոն բաժնում ունեցող խանութներում արգելվում ե մի ուկցիայի պակասորդները (կամ ավելցուկները) ձեռակերպել մյուս սեկցիայի պակասորդների (կամ ավելցուկների) հաշվին:

98. Տնտհաշվարկային խմնութիւն գեկավարի կողմից սառուցված ապրանքաւունյութական արժեքների հաշվետվությունները հանձնվում են վերադաս կազմակերպության դեկավարին ի հաստատություն:

Այն գեպքում, յերբ վերադաս կազմակերպության դեկավարը բեկանում ե ինքնուրույն հաշվեկշուն անցած խանութիւն գերեկտորի յեղակացությունները՝ կատարված ինվենտարիզացիայի արդյունքների մասին, հաշվապահությունը պարտավոր ե կատարել անհրաժեշտ ուղղումներ, տեղեկացնելով այդ մասին գրավոր նյութապես պատասխանատու անձին:

99. Ինվենտարիզացիայի ժամանակ յերեան հանված ապրանքների պակասորդները, վորոնք վերաբերում են նյութապես պատասխանատու կամ մեղավոր անձանց, այդ պակասորդների գումարները հատուցում են վերջինները ապրանքների վաճառքի գներով (մանրածախ զներով):

100. Մանր պակասորդների գեպքում, յերբ այդ կատարվել ե խանութիւն աշխատատի կողմից առաջին անգամ—նրա անփոքության հետևանքով, սխալ հաշվառման գործողություն պատճառով, վորպիսի գեպքը չի պարունակում իր մեջ քրեական հանցանքի նշաններ, այդ գեպքում մեղավորը՝ խանութիւն դիրեկտորի կամ վերադաս կազմակերպության դեկավարի կողմից յենթարկվում է կարգադատական տուժի (համաձայն խանութիւն հաշվառումների), ընդհանուր քաղաքացիական կարգով ծածկելով խանութիւն հասցըրած նյութական վնասը:

Հայտնաբերված մանր պակասորդները պետք ե անմիջապես մարդեն և միայն առանձին գեպքերում թույլատրվում ե ստանալ աշխատողից պարտավորագիր, ովքալ պակասորդը սահմանված ժամկետին մարելու համար: Այդ պարտավորագրի ընդհանուր ժամկետը նշանակում ե խանութիւն (ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող) գերեկտորը կամ վերադաս առեսարական կազմակերպության գեկավարը և չի կարող յերկույթեք ամենից ավելի լինել: Վճարումների առանձին ժամկետները պետք ե համապատասխանեն աշխատավարձի վճարման ժամկետներին: Առաջին իսկ չվճարելու դեպքում, վորը նախատեսնելով ե պարտավորագրով, բռնագանձման մասին գործը հանձնվում ե դատարան:

Ծանոթության.— Վորպիս կանոն, պարտավորագրերը պահպատ են այն խանութիւններում, վորանող աշխատառում ե այդ պարտավորագիր տվող անձը:

ԹԱՅԻՒՆ ԸՆԾԱԲՈՐ

ԽԱՆՈՒԹԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԽԱՆՈՒԹԻ ԴԻՄԵԿՑՈՒՐԻ ՅԵՎ ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

101. Յուրաքանչյուր խանութի զլուխ կանգնած զիրեկտորը, վորին նշանակում և վերապաս առեւրական կազմակերպության ղեկավարը և դործում և վորտես միանձնյա ղեկավար հիմք լնունելով վերապաս կազմակերպության ղեկավարի կողմից արված հավատաքմագիրը կամ վկայականը (առեւրական կազմակերպության, նրա բաժանմունքները, դրավկաները, դրասենյուիները և այլն):

Խանութի զիրեկտորը և նրա ողնականն իրենց աշխատանքի ընթացքում ղեկավարվում են սույն կանոններով, նաև վերապաս առեւրական կազմակերպությունների զիրեկտիֆներով, առեւրի անդական որպանների և խանութի ներքին կարգավաճության կանոններով:

102. Խանութի զիրեկտորը լիովին պատասխանատու յի իր առեւրա-տնտեսվարական գործունեյության և վերապաս կազմակերպության կողմից հաստատված խանութի առեւրա-ֆինանսական պլանի կտարարման համար:

103. Խանութի զիրեկտորի նշանակումը ձետերպում և վերապաս կազմակերպության հրամանով, վորի մեջ ցույց և արվում այն, թի արդյոք այդ նշանակած անձնավորության վրա դրվում և խանութի տողանքայութական արժեքների անմիջական նյութական պատասխանատվությունը թի վոչ:

Սեկցիաների բաժանման խանութի սույն պատասխանատվությունը դրվում և բաժինների կամ սեկցիաների վարիչների վրա, խանութի զիրեկտորը և նրա ողնա-

կանը լիովին պատասխանատու յեն խանութի դույքի ու սարքավորման պահպանման համար:

104. Այն գեպօւմ, յերբ տվյալ խանութում, վորտեղ դիրեկտորը չի կրում նյութական պատասխանատվություն և այնտեղ առաջացել են յուրացումներ կամ հափշտակումներ, դիրեկտորի կամ նրա տեղակալի կողմից այդ հանցագործությունների դեմ իր ժամանակին և բավարար չափով պայքարի միջոցներ չձեռնարկելու հետևանքով, վերջինները կանչվում են պատասխանատվության անմիջապես հափշտակումներ և յուրացումներ կատարող մեղավորների հետ միասին:

105. Նյութապես պատասխանատու դիրեկտորը և նրա ոգնականը անցնում են իրենց պարտականությունների կատարմանը՝ ապրանքների, գանձարկղի սարքավորման, տարայի արտհագումտի, տրանսպորտի, և մյուս ունեցվածքի լիակատար ինվենտարի պայցիայից հետո միայն:

Նյութապես վոչ պատասխանատու դիրեկտորը և նրա ոգնականն անցնում են իրենց պարտականությունների կատարմանը միայն այն դեպօւմ, յերբ կատարեն գույքի, սարքավորման, արտհագումտի ընդունումը և ստուգեն դրամարկղում յեղած կանխիկ գումարը՝ ընդունման պահին, իսկ ապրանքներն ըստ համապատասխան ամսաթվի հաշվեկշռի տվյալների:

106. Նոր նշանակված զիրեկտորի կողմից խանութի ընդունումը՝ ձեռկերպվում ե ընդունման-հանձնման ակտով, վերջինին ստորագրման պահից՝ ստորագրությամբ, վորից հետո նշանակված զիրեկտորը լիովին պատասխանատու յի խանութի վողջ առեւրա-տնտեսական գործունեյության համար:

107. Ընդունման-հանձնման ակտը կազմում և հանձնաժողովը, բաղկացած հետևյալ կազմից՝ ա) նոր նշանակված խանութի դիրեկտորից, բ) փոխվող դիրեկտորից, գ) վերադաս կազմակերպության դիրեկցիայի ներկայացուցչից և դ) հաշվապահից:

Այն գեպօւմ յերբ փոխվող դիրեկտորը խուսափում է հանձնել նոր դիրեկտորին խանութը և նրա արժեքները, հիվանդության կամ այլ պատճառներով չի կարողանում մամնակցել հանձնմանը և ընդունմանը, այդ գեպօւմ խանութի և նրա նյութական արժեքների ընդունումը և հանձնումը կատարվում և վերադաս կազմակերպության կողմից նշանակված հանձնաժողովի միջոցով:

Ծանօթարյան.— Յեթե փոխվող դիրեկտորն առանց հարգելի պատճառի խուսափում և հանձնել խանութը և

նրա ազրանքանյութական արժեքները դիրեկտորին,  
այդ գեղքում վերագաս կազմակերպության հանձնա-  
ժողովը հատուկ ակտով արձանագրում և այն հանդա-  
մանքը, վոր խանութի հանձնման մասին նախորդք  
հայտնիլ և նախկին դիրեկտորին:

108. Ընդունման-հանձնման ակտը պետք եւ պարունակի՝  
ա) ակտ կազմողների ազգանունը, անվան և հայրանվան  
սկզբնատառերը, պաշտոնը և հասցեն:

բ) ակտ կազմելու դատան.

գ) վերագաս առևտրական կազմակերպության գեկավարի  
հրամանը խանութի նախկին դիրեկտորին աղատելու և նոր դի-  
րեկտոր նշանակելու մասին.

դ) տվյաներ առևտրա-ֆինանսական պլանի կատարման  
ընթացքի մասին տարվա, յեռամսյակի և ամսականի նկատմամբ՝  
հետեւյալ ցուցանիշներով. 1) վաճառքի շրջանառությունը, 2) ապ-  
րանքային մնացորդները և նրանց որական շրջանառումը, 3) շր-  
ջանառման ծախսերը, 4) շահավետությունն ըստ վերջին հաշ-  
վելշուրի (վերջին կետը վերաբերում է միայն ինքնուրույն հաշ-  
վելշուր ունեցող խանութներին).

յե) գործող պայմանագրերի թվարկումը և նրանց կատա-  
րումը.

զ) ինքնուրույն հաշվելշուր ունեցող խանութների համար  
ամսվա հաշվելշուրը.

ե) ապրանքների ինվենտարիզացիայի ակտը.

ը) ունեցվածքի ինվենտարիզացիայի ակտը.

թ) խանութի դրամարկղի դրության մասին ակտը.

ի) իրովին տնտհաշվարկային խանութների վերաբերմամբ, այդ  
խանութի հաշվառման մասին դրության մասին  
բանի վավերացրած քաղվածքը.

ժ) կշռաչափողական պարագաների քանակի և դրության  
մասին կազմված տեղեկագիրն ըստ այդ պարագաների, պաս-  
ալուստների.

ժա) կնիքի, շտամպի և պլոմբների հանձնման ակտը.

ժբ) խանութում աշխատողների կազմի ցուցակը և նրանց  
ընութագրերը:

109. Խանութի դիրեկտորը գործերն ընդունելիս պարտա-  
վոր ե

ա) ծանոթանալ խանութում աշխատողների հաստիքի հետ,

նայել աշխատանքային գրքույկները և յուրաքանչյուր աշխա-  
տողի բնութագիրը.

բ) դիրեկտ խանութի ինչպես առևտրային, այնպես ել ոժան-  
դակ պահեստային շենքերը և հատուկ ակտով ցույց տալ շենքե-  
րի այն թերությունները, վորոնք բացասաբար են անդրադառ-  
նում ապրանքների կանոնավոր պահպանման վրա (կտուրների,  
գուների, փականների, կողպեքների, աստիճանների, լուսավորման  
սիստեմի, ջրմուղի, ջերմացման, կոյուղու, սառեցման սարքերի):

և անութի նորմալ աշխատանքին արգելառիթ հանդիսացող  
թերությունները, վորոնք հնարավորություն չկա վերացնել դի-  
րեկտորի իրավունքների սահմաններում, պետք և վերացնի վե-  
րադաս կազմակերպությունը:

Այդ թերությունների վերացման ժամկետները պետք եւ սահ-  
մանվի ընդունման ակտում.

գ) ստուգել կշեռքների անհրաժեշտ առկա գույքը, նրանց  
տարբեր կշռման ճշտությունը, հրշեցային գույքի առկայությու-  
նը և այլն.

դ) ստանալ պայմանագրեր կամ նրանց պատճենները՝ շեն-  
քերի վարձակալման, պահակային հակողության և կոմունալ  
ծառայությունների վերաբերյալ.

յե) ստուգել չնմանի արդյոք այդ խանութը վորեե պայմա-  
նագիր մատակարարողների կամ այլ կազմակերպությունների հետ  
և արձանագրության մեջ շեշտել այդ պայմանագրերի կատարման  
վիճակը խանութի հանձնման որը, ծանոթանալ նմանապես այն  
պայմանագրերի, համաձայնագրերի և կարգադրությունների  
իրացման հետ, վորոնք վերաբերում են խանութի պարանքնե-  
րի մատակարարման և նրա աշխատանքին՝ ընդհանրապես.

զ) ծանոթանալ գոյություն ունեցող պարտադիր վորոշում-  
ներին, վորոնք վերաբերում են խանութի առևտրի ժամկետին,  
խանութի ճակատի ցուցափեղի ճակարպման, սանիտարական  
կանոններին և այլն.

ե) ծանոթանալ վերադաս առևտրական կազմակերպության  
այն բոլոր կարգադրությունների հետ, վորոնք իրենց ուժի մեջ  
են մինչև տվյալ խանութի հանձնումը և վորոնք վերաբերում  
են ինչպես այդ խանութին, նույնպես և նույն տեղի մանրածախ  
խանութներին:

110. Խանութի դիրեկտորի և նրա ոգնականի աշխատան-

քի վերջնական ընդունման փորձաշրջանը սահմանվում է 24 աշ-  
խատանքային որ:

111. Խանութի դիրեկտորը (կամ նրա ոգնականը) պարտա-  
վոր և աշխատանքի զալ խանութի բացումից 15 րոպե առաջ՝  
Խանութը բանալուց առաջ դիրեկտորը պարտավոր և ստուգել  
փականքները և պլոմբները:

Խանութի կողմեքների, նիգերի և պլոմբների ջարդվածքի  
յերկան հանվելու դեպքում խանութի դիրեկտորը պարտավոր և  
այդ մասին անմիջապես տեղեկացնել միլիցիային և պահակային  
վարչությանը (կենտրոնացած պահակության դեպքում), նաև վե-  
րադաս կազմակերպությանը և բանալ շենքի դռները միայն այդ  
հիմնարկությունների ներկայացուցիչների ներկայությամբ:

Այդ դեպքում խանութը վաճառքի յե անցնում միայն ապ-  
րանքանյութական արժեքների լիակատար ինվենտարիվացիա-  
յից հետո կամ վերադաս առետրական կազմակերպության հա-  
տուկ թույլտվության հիման վրա:

Ծանոթարյուն.— Խանութը վերադաս կազմակերպության  
դիրեկտիայի տերիտորիայից դուրս գտնվելու դեպքում,  
վերադաս կազմակերպության ներկայացուցչին կարող  
և փոխարինել տեղի խորհրդի կամ հասարակայնու-  
թյան ներկայացուցիչը:

112. Խանութի դիրեկտորը զննելով բոլոր պլոմբները, փա-  
կանները, նիգերը և գտնելով նրանց լիովին կանոնավոր վիճա-  
կում, բաց և անում առետրական ձեռնարկությունը, ընդվորում,  
յերբ նյութական պատասխանատվությունն ընկնում և սեկցիա-  
ների (բաժինների) վարիչների վրա, այդ դեպքում շենքի դռնե-  
րը բացվում են այդ սեկցիաներից մեկի վարիչի (վոր նյութա-  
պես պատասխանատու յե) ներկայությամբ:

Ծանոթարյուն.— Այն դեպքում, յերբ հափշտակման փաս-  
տերի արտաքին նշանների բացակայման հետևանքով  
վարչությունը մտնում է խանութ, պարզում և ապ-  
րանքանյութական արժեքների հափշտակման նշան-  
ները, այդ դեպքում խանութն անմիջապես փակվում  
և վերադաս առետրական կազմակերպության ներ-  
կայացուցչի հետ միասին կատարվում և ապրանքա-  
նյութական արժեքների ինվենտարիվացիա:

113. Խանութը աշխատանքային ժամերից դուրս պետք և  
ապահովի պահակային պաշտպանությամբ: Առետրական և պա-

հեստային շենքերը, բանվորական որվա վերջը պետք և կնքվեն  
կամ պլոմբվեն: Արգելվում է խանութի բանալիները և պլոմբները  
կամ կնիքը թողնել միենույն մարդու մոտ:

114. Նորմալ և անընդհատ աշխատանք կազմակերպելու  
նպատակով խանութի դիրեկտորը պարտավոր են

ա) ապահովել խանութում ապրանքային պաշարներ հա-  
մապատասխան նորմատիվներով, վորոնք սահմանված են տեղա-  
կան առետրի որդանների կողմից և վերադաս առետրական կազ-  
մակերպության կազմակերպության համաձայն.

բ) ապրանքային ասսորտիմենտի համաձայն կազմակերպել  
խանութում անհրաժեշտ ապրանքների ընտրում, ստացում և  
հանձնում անընդհատ առետրի համար.

գ) անձամբ հետեւ ապրանքների ժամանակին ներմուծմա-  
նը, ուղարկել մատակարարողներին ապրանքային հայտերը.

Ծանօթարյուն.— Խանութի դիրեկտորն իրավունք չունի ըն-  
դունել ի պահ խանութում մեծ քանակությամբ ապ-  
րանքներ, վորոնք հարավոր չե տեղավորել հարմա-  
րեցված շենքերում, պահպանելով ապրանքի վորակը:

դ) խանութի մատակարարման գործում առաջացած ընդ-  
հարման դեպքերում այդ մասին անմիջապես տեղեկացնել վերա-  
դաս կազմակերպության ղեկավարին և միենույն ժամանակ ձեռք  
առնել անհրաժեշտ միջոցներ՝ ներմուծելու խանութ անհրաժեշտ  
ապրանքներ:

115. Վերադաս առետրական կազմակերպության ղեկավարի  
թույլտվությամբ, խանութի դիրեկտորը իրավունք ունի կատա-  
րել խանութի համար անհրաժեշտ ապրանքների գնումներ, կնքել  
ապրանքների մատակարարման համար ուղղակի պայմանագրեր  
արդյունաբերության, կոոպերացիայի և կոլտնտեսությունների  
հետ: Խանութների կողմից ապրանքների անմիջական գնումների  
կարգը սահմանում է վերադաս կազմակերպությունը:

116. Գնորդի սպասարկման վորակը սիստեմատիկ կերպով  
բարձրացնելու նպատակով խանութի դիրեկտորը պարտավոր են

ա) ստեղծել հարավորություն գնորդի համար դիրեկտորը  
խանութում յեղած բոլոր ապրանքները, ծանոթանալու նընաց վո-  
րակի, տեսակի, արժեքի, նաև ոգտագործման ձևերի հետ.

բ) կազմակերպել և կյանքում կիրառել առետրի կուլտու-  
րական ձևերը՝ նախնական պատվերներ, ապրանքը տուն հասցը-

ներ, խանութի առանձին բաժնում ապրանքների հատակամառ  
խորհրդատվություն և այլն.

գ) ապահովել խանութում ապրանքների ասսորտիմենտի  
մինիմումի առկայությունը վոր հաստատված և առևտրի տեղա-  
կան որդանների կողմից.

դ) ապրանքներն արագ բաց թողնելու և հերթերը վերաց-  
նելու նպատակով կազմակերպել ապրանքների նախնական պատ-  
րաստում և փաթաթում.

յե) կազմակերպել գնորդների համար պարբերական ին-  
ֆորմացիա ապրանքների գների, խանութում գործադրվող կու-  
տուրական սպասարկման ձևերի, ապրանքների առկայության  
մասին՝ խանութի հայտնի տեղում կախիլով ապրանքների գների  
պրեյակուրանտներ, հայտարարություններ, գեղարվեստորեն ձե-  
վակերպելով և ներսից ու դրսից մաքուր պահելով խանութի ցու-  
ցափեղկերը.

Ցուցափեղկերում գնել միմիայն այն ապրանքները, վորոնք  
կան խանութում.

Ծանոթաբանութիւն.— Այս արգելքը չի տարածվում ցուցափեղ-  
կերում դրված ապրանքների այն արհեստական կեր-  
պերին (մուլյակ), վորոնք համապատասխանում են  
խանութում յեղած ապրանքների ասսորտիմենտին,  
նաև ցուցափրված բուտափորիային (մակետներ, մանե-  
կեններ և այլն):

Խանութի գարակներում, ցուցափեղկերում և վա-  
ճառասեղանի վրա դասավորված ապրանքները պետք  
է ունենան յառևիճներ, վորոնց վրա ցույց են տրվում  
ապրանքների տեսակը և գները:

ղ) հետեւ, վոր վաճառվող ապրանքները բաց թողնվեն  
մաքուր քաշով, լիաչափ սահմանված գներով և համապատաս-  
խան վորակի:

ի) պարբերաբար հրավիրել գնորդների կոնֆերենցիաներ,  
վորակ քննության առնել գնորդների սպասարկման հետ կապ-  
ված հարցերը.

ը) խանութում պահել ԽՍՀՄ Առևտրի ժողկումատի կողմից  
մշակված ձևով բողոքների և առաջարկությունների գիրք, ներ-  
կայացնել այն առաջին իսկ պահանջին, տալ սպառիչ պատաս-  
խան գնորդների հարցերին և իրացնել գնորդների կողմից տրված  
խելացի առաջարկությունները.

թ) ցույց տալ անհրաժեշտ աջակցություն պրոֆմիություն-  
ների և տեղական խորհուրդների կողմից ուղարկված բրեգադա-  
ներին ու հասարակական վերահսկողությանը:

ժ) վաճառքի տեղում ունենալ հատուկ ցուցատախտակ, վորի  
վրա գրված լինի վաճառողների-աշխատողների ազգանունը (սեկ-  
ցիայի վարիչի, խանութի գիրեկտորի ազգանունը): Այդ ցուցա-  
տախտակը պետք է փակցված լինի վաճառասեղանի հայտնի տե-  
ղում:

Ծանոթաբանութիւն.— Խանութը պարտադիր ցուցանակների վո-  
խարեն կարող է ոգտագործել նաև վաճառողների ազ-  
գանուններով կրծքային համարակալված ժետոններ:

117. Խանութի գիրեկտորն իրավունք ունի աշխատողներ  
ընդունել փոխել և հեռացնել՝ ձևակերպելով այդ բանը վերադաս  
առևտրական կազմակերպության միջոցով:

Խանութի սեկցիաների (բաժինների) վարիչների ընդունու-  
մը և հեռացումը կատարվում և վերադաս կազմակերպության  
կողմից՝ խանութի գիրեկտորի առաջարկությամբ:

118. Խանութի կադրերն ընտրում են գիրեկտորը՝ հաստատ-  
ված հաստիքների համաձայն՝ ըստ վորում յուրաքանչյուր թեկ-  
նածու պետք և մանրազնին ստուգվի համաձայն նրանց դոկու-  
մենտների (անձնագիր, աշխատանքային գրքույկ, բնութագիր),  
նաև փորձնական ժամանակվա ընթացքում այդ թեկնածուի կա-  
տարած աշխատանքի վորակով:

119. Փորձնական ստաժը սահմանվում է՝ սեկցիաների վա-  
րիչների և նրանց ոգնականների համար—24 բանվորական որվա  
ընթացքում, վաճառողների, գանձապահների և մյուս ոպերատորի  
աշխատողների համար—12 որվա ընթացքում, իսկ կրտսեր սնձ-  
նակազմի համար (բանվորների, հավաքարաբների, պահակների)  
—6 որվա ընթացքում:

120. Պարենային խանութներում նոր ընդունվող աշխատող-  
ները (վաճառողներ, սեկցիաների վարիչներ, պահաստապետներ,  
հավաքարաբներ) պարտավոր են մինչև աշխատանքի անցնելը  
յենթարկվել բժշկական քննության՝ ներկայացնելով խանութի  
գիրեկտորին բժշկական հիմնարկից համապատասխան տեղեկանք:

Խանութի գիրեկտորը պարտավոր է կադմակերպել—վերա-  
դաս կազմակերպության կողմից սահմանված ժամկետներին—  
բժշկական ստուգումներ խանութի համապատասխան աշխատող-  
ների համար:

121. Դիրեկտորը չի կարող աշխատանքի բնդունել հետեւյալ անձնավորություններին.

ա) տվյալ խանութից գործալքման համար հեռացվածին՝ յերեք ամսվա ընթացքում.

բ) յուրացումների, հափշտակումների և այլ շահախնդիր գործերի համար դատավաճներին, վորոնց արգելվել և աշխատել տնտեսական և առևտրական կազմակերպություններում՝ դատարանի կողմից վորոշված ժամանակամիջոցում.

գ) դատի կամ հետաքննության տակ գտնվող անձնավորություններին, վորոնք մեղադրվում են պակասորդների, յուրացումների և հափշտակումների համար.

դ) աշխատանքային գրքույկներ չներկայացնողներին, իսկ նոր ընդունվողների վերաբերմամբ տնային վարչություններից կամ գյուղխորհուրդներից իրենց վերջին գրադմունքի մասին վկայականներ չներկայացնողներին (համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1938 թ. դեկտեմբերի 20-ի «Աշխատանքային գրքույկների» մասին վորոշման 6-րդ հոդվածի).

յն) համապատասխան կատեգորիային պատկանող աշխատողի համար սահմանված տեխմինիմումից քննություն չտվողներին:

122. Խանութի աշխատողների հեռացումը կատարվում է աշխատանքային որենսդրության մեջ սահմանված կարգով ընդհանրապես և մասնավորապես կարգապահական պատասխանաւորվության կանոնների համաձայն:

123. Աշխատողների հեռացումը ձևակերպվում և առանձին հրամաններով, վորոնց մեջ պետք են ցույց տրվի հեռացման պատճառները (իր ցանկության համաձայն, աշխատանքի մեջ անպետք լինելու համար և այլն):

124. Նյութապես պատասխանատու աշխատողներին, վորոնց մոտ յերեսն են հանվում ապրանքների և այլ արժեքների պակասորդներ (բացի ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. հոկտեմբերի 9-ի № 1825 վորոշման մեջ նախատեսնված դեպքերից) պետք են հանել նյութապես պատասխանատու աշխատանքից մինչև պակասորդների գոյացման պատճառները պարզելը, տալով նրան նյութապես պատասխանատվություն չունեցող աշխատանք, իսկ նման աշխատանք չինելու դեպքում, կամ աշխատողի հրաժարվելու դեպքում, նրանք հեռացվում են աշխատանքից:

Այն դեպքում, յերբ բավական հիմք կա կարծելու, վոր պակասորդը աշխատողի հանցագործ վարմունքի հետևանք ե (յերբ

աշխատողը մերկացված և հանցագործությունը կատարելիս և խոստովանել ե այդ հանցանքի մասին), խանութի դիրեկտորը պարտավոր և այդ աշխատողին ժամանակավորապես ազտել պաշտոնից, զրկելով նրան աշխատավարձ ստանալուց և անմիջապես հեռացնել նրան, յերբ ուժի մեջ մտնի դատարանի վճիռը կամ մեղավորը յերկու ամսից ավելի յենթակա լինի դատական հսկողության:

125. Հեռացված աշխատողի հետ հաշվառքը փակվում է միայն այն դեպքում, յերբ նա լիովին վերադարձնում է իր մոտ գտնվող առհաշիվ արժեքները, փաստաթղթերը, նաև նրա տրամադրության տակ յեղած սանիտարային և արտադրական հագուստները:

126. Խանութի այս կամ այն նոր աշխատողին իր պաշտոնը հանձնելուց առաջ, խանութի դիրեկտորը պարտավոր և ցույց տալ նրան աշխատանքային տեղը և հրահանգել ինչպես նրա պարտականությունների, նույնպես և ապրանքների դասավորման ու բաց թողնման տեխնիկայի, խանութում առևտուրը վերջանալուց հետո ապրանքները կարգավորելու, դարսելու, վաճառակե-ղանը կարգի բերելու և նման պարտականությունների մասին:

127. Խանութում աշխատանքի կազմակերպման գծով դի-րեկտորը պարտավոր ե՝

ա) ապահովել լիովին իրացնելու ԽՍՀՄ Ժողկոմխորհի, Համ-կամբաւի (բ) Կենտրոնի և Համամիարքենական Արհեստական Միարյանեների Կենտրոնական Խորհրդի 1938 թվի դիկտեմբերի 28-ի «Աշխատանքային դիսցիլինայի կարգավորման, պետական սո-ցիալական ապահովագրման պրակտիկայի բարելավման և այդ գործում նկատված չարաշահության դեմ տարվող պայքարի մա-սին» վորոշումը.

բ) ապահովել բանվորական ուժի դասավորումը, մշակել խանութի աշխատողների համար աշխատանքի ամսական գրաֆիկ և տապահովել այդ գրաֆիկի կատարումն այն հաշվով, վորպեսզի խանութում գնորդների խառն բազմություն հավաքված լինելու դեպքում, ապահոված լինի վաճառողների անհրաժեշտ հաստիքը:

Ամսական գրաֆիկները տվյալ ամսից առնվազն յոթ որ առաջ պետք ե փակցված լինի խանութում, մի բաժնից մյուս բաժնին փոխադրել աշխատողներ, յեթե այդ պահանջվում ե հեր-թերը վերացնելու նպատակով.

գ) վերադաս առևտրական կազմակերպությունների կողմից

հաստատված գործարքային նորմաները հասցնել բաժիններին, սեկցիաներին և խանութի աշխատողներին՝ բացատրելով ու փակցընելով այդ նորմաները և կազմակերպելով կատարողական նորմաները հաշվառումը.

դ) սոցիալիստական մըցում ծավալելու համար ապահովել բոլոր պայմանները, ստախանովական աշխատանքի կիրառման ձեռվերը, խրախուսելով և մասսայականացնելով խանութի ստախանովականների աշխատանքի փորձերը, պարզեատրելով և պարզեատրման ներկայացնելով խանութի լավագույն աշխատողներին՝ նրանց խելացի ձեռնարկումների, նրանց աշխատանքի բարձր արտադրողականության և աշխատանքի մյուս ցուցանիշների համար և ստեղծելու համար պայմաններ՝ խանութի աշխատողների շրջանում տանելու քաջաքական ու դաստիարակչական աշխատանքներ.

յե) հրավիրել խանութի աշխատողների արտադրական խորհրդակցություններ՝ քննության առնելով խանութում աշխատանքի բարեկալմանը վերաբերող հարցերը.

զ) ապահովել խանութի աշխատողի համար սահմանված տեխնիմումի անցկացումը և նրա վորակի բարձրացումը:

128. Դիրեկտորը պարտավոր է ժամանակին ապահովել խանութի աշխատողներին սանիտարական և արտադրական հագուստաներով, կազմակերպել այդ հագուստների պահպանումը, նրանց ժամանակին լվանալը, խանութում ունենալով լվացարաններ, յերեսորբիչներ և ոճառ:

129. Դիրեկտորին իրավունք է արվում տուժի յենթարկել այն աշխատողներին, վորոնք խախտում են աշխատանքային կարգապահությունը և խանութի ներքին կարգ ու կանոնը:

Զի թույլատրվում աշխատողին տուժի յենթարկել հեռակա կարգով, նրա բացակայությամբ և առանց տվյալ աշխատողի բացատրությունը լսելու:

130. Վերադաս առևտրական կազմակերպության կողմից հաստատված աշխատավարձի ֆոնդի սահմաններում դիրեկտորը պարտավոր է ժամանակին դուքս գրել և վճարել աշխատողների աշխատավարձը, ստորագրել աշխատավարձի տեղեկագրի տակ:

131. Խանութի դիրեկտորը կամ նրա ողնականը պարտավոր է ամբողջ աշխատանքի ընթացքում լինել խանութի գահինում:

132. Դիրեկտորը պարտավոր է ձեռք առնել միջոցներ արամատացնելու և առավելագույն չափով ոգտագործել ու առևտրական

բոլոր տեսակի նոր սարքավորումները և կազմակերպել այդ սարքավորումների շահագործման ուսուցում աշխատողների մեջ:

133. Դիրեկտորը պարտավոր է աշխատել խանութում տարվող սացինալիքատորական-գյուտարարական աշխատանքներին, կազմակերպել այդ ձեռնարկումներն իրացնող միջոցառումներ և նրանց գործադրման ու կատարելագործման համար անհրաժեշտ միջոցներ:

134. Դիրեկտորը պարտավոր է ամեն որ ստուգել խանութի սարքավորումները և գույքի կանոնավոր վիճակը, առանձնապես կտրող և կցուաչափ սարքերը, դրամարկղային ապարատները, ապահովել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը, ստուգել աշխատանքի տեղում անհրաժեշտ քանակի փաթաթող նյութերի առկայությունը, մկրատները, հաշվիչները, չեկերի գրքույցները, մատիտները և այլն:

135. Դիրեկտորը սահմանված լիմիտների չափով իրավունք ունի կատարել շենքի և գույքի փոքր վերանորոգման ծախսեր, նաև ձեռք բերել խանութի համար մանր սարքավորում և գույք:

Ավելի մեծ վերանորոգման, նմանապես թանգարժեք կայք և գույք ձեռք բերելու համար անհրաժեշտ ծախսերը կատարում ե վերադաս առևտրական կազմակերպությունը:

136. Դիրեկտորը պարտավոր է մշտական հսկողություն սահմանել տարայի հետ վարկելու, խանութում այդ տարան կանոնավոր կերպով պահպանելու, նաև տարան վերանորոգելու վրա և ապահովել տարան կրկնակի կերպով ոգտագործելը, վերադրձնելով նրան մատակարարողին կամ վերադաս կազմակերպության թույլտվությամբ՝ հենց տեղում վաճառելով:

137. Դիրեկտորը պարտավոր է ձեռք առնել միջոցներ խանութում սաքրություն ստեղծելու համար, այսինքն հատակները պարբերաբար լվանալ տալով, անձամբ մաքրության դրությունը հաճախակի ստուգելով, հետեւ լինելու խանութի անկյունների, արկղների, վաճառասեղանների, կահույքի, գույքի մաքրությունը, նմանապես հետեւ լինելու խանութի աշխատակիցների անձնական մաքրությանը, նրանց հագուստի հաճելի լինելուն, ձեռքերի, յեղունկների մաքրությանը և այլն:

138. Դիրեկտորը պարտավոր է պարբերաբար ուսումնասիրել գնորդների պահանջները վորի համար նաև պետք է պահի գնորդների պահանջները գրանցող մատյան և ստանալ վաճառող-

ներից գրավոր տեղեկանքներ ապրանքների ասսորտիմենտի և հատկության մասին:

Գնորդների պահանջի ուսումնասիրման հիման վրա իմանալով արտադրական ձեռնարկությունների և ռայոնների կողմից արտադրվող ապրանքային ասսորտիմենտը, դիրեկտորը պարտավոր և ամեն կերպ աջակցել արտադրող ձեռնարկություններին, ոժանդակիով արտադրել և վաճառել նոր տեսակի ապրանքներ:

139. Անցած յեռամսյակի աշխատանքի պրակտիկայի հիման վրա և գնորդների ցուցաբերած ապրանքային պահանջը նկատի ունենալով, խանութի դիրեկտորը կազմում է առևտրափինանսական պլանի նախագիծը, զնում և այդ նախագիծը արտադրական խորհրդակցության քննարկմանը, վորին մասնակցում են արհեստակցական միությունների ներկայացուցիչները և ներկայացնում ե վերադաս առևտրական կազմակերպությանը հաստատման, վորից հետո պլանային առաջարկանքներն իշեցվում են՝ խանութների սեկցիաներին (բաժիններին) և վաճառողներին:

140. Խանութի դիրեկտորը պարտավոր է ապահովել խանութում հաշվապահական, գործառնական և վիճակադրական հաշվառումների տանումը և ներկայացնել վերադաս կազմակերպությանը հաշվետվություններ՝ նրա կողմից սահմանված ժամկետներին:

Այդ հաշվետվությունների մեջ պետք է ցույց տալ խանութում յեղած ապրանքների մնացորդները, նոր ստացված ապրանքների մասին տեղեկություններ և այդ տեղեկություններին կցված փաստաթղթերը: Դիրեկտորը նաև ամեն որ ստուգում է դրամական հասույթների մուծումները Պետրանկ իր ժամանակին և կանոնավոր կերպով: Ստուգում ե նմանապես, չեկերի և մեխանիկական գանձարկղի կոնտրոլ ժապավենների ցուցանիշների հիման վրա, որվահանաքից գոյացած գումարները:

141. Արգելվում է կողմնակի մարդկանց մուտքը, ինչպես վաճառասեղանի հետեւ, նույնպես ել խանութի մյուս ոժանդակ շենքերը: Վաճառասեղանի հետև և ոժանդակ շենքերը մուտք ունեն միայն այն անձինք, վորոնք իրավունք ունեն ստուգել խանութի սանիտարական դրությունը, խանութի գործունելությունը, այդպիսի անձանց մուտքը թույլ է տրվում նրանց համապատասխան փաստաթղթերը ստուգելուց հետո:

142. Խանութի դիրեկտորը և նրա ոգնականը, իրենց անմիջական պարտականություններին անցնելուց առաջ, պետք է ծա-

նոթանան սույն «Կանոնների» հետ և ստորագրում են նրա համար, վոր այդ «Կանոնները» կարդացված ե, հասկացված և ընդունված ե անշեղ կատարումով:

2. Սեկտիվի (ԲԱԾՆԻ) վԱՐԻՉԻ ՅԵՎ ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԻ ԻՐԱՎՈՒԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

143. Խանութներում սեկցիաներ (բաժիններ) կազմակերպվում ե վերադաս կազմակերպության դիրեկտորի կարգադրության համաձայն:

Խանութի ամեն մի սեկցիան (բաժին) ղեկավարում է նրա վարիչը, վորն իր աշխատանքի ասպարեզում ղեկավարվում ե սույն «Կանոններով», նաև խանութի դիրեկտորի կամ նրա ոգնականի ցուցմունքներով, և խանութի կարգ ու կանոնին վերաբերող կանոններով:

144. Խանութի սեկցիայի (բաժնի) վարիչին նախատեսում ե դիրեկտորը և հաստատում է իր պաշտոնում վերադաս կազմակերպության ղեկավարը:

145. Խանութի սեկցիայի (բաժնի) վարիչի նշանակումը ձեակերպվում է վերադաս կազմակերպության կողմից, մատնանշելով սեկցիայի (բաժնի) վարիչի ապրանքանյութական արժեքների պատասխանատվությունը:

146. Սեկցիայի (բաժնի) վարիչն իր պարտականություններին ե անցնում ապրանքների, տարայի, գույքի, սարքավորումների, արտհագուստի և խանութի մնացած ունեցվածքի ցուցակագրումից հետո:

147. Նոր նշանակված սեկցիայի վարիչի կողմից սեկցիայի ընդունումը ձեակերպվում է ականով, այն ձեռք ու կարգով, վոր սահմանված և խանութի դիրեկտորի համար:

Ակտի ստորագրումից հետո, սեկցիայի վարիչը կրում է լրիվ պատասխանատվություն խանութի սեկցիայի առևտրագործառնային գործումների համար:

149. Սեկցիայի (բաժնի) վարիչի հետ հավասար կերպով ապրանքանյութական արժեքների համար լիովին պատասխանատույթը յե նաև նրա ոգնականը:

148. Սեկցիայի վարիչի պարտականությունները՝  
ա) խանութի դիրեկցիայի հանձնարարությամբ ընտրել ստանալ և փոխադրել սեկցիայի համար անհրաժեշտ ապրանքներ:

բ) սեկցիայում յեղած ապրանքների պահպանման կազմակերպումը.

գ) Կազմակերպել և իրացնել գնորդներին ապրանքների բաց թողնումը.

դ) կազմակերպել և ժամանակին պահպանել ու հետ ուղարկել ապրանքների տարան մատակարարողին.

յե) սեկցիայի չեղերի հաշվումը և ստացված գումարի համեմատումը դրամարկղի գումարի հետ.

զ) սահմանված ժամկետներին ներկայացնել դիրեկցիային և հաշվապահությանը՝ հաշվետվություններ և ապրանքների մասնակիցների, նրանց իրացման ու ստացման մասին տեղեկություններ և նման այլ տեղեկանքներ՝ կցելով նրանց արդարացուցիչ փաստաթղթեր.

ե) սեկցիայի վաճառողների և այլ աշխատողների ընտրելը և նրանց թեկնածությունները ներկայացնել խանութի դիրեկցիային ի հաստատություն.

ը) վաճառողների համար սահմանված բեռնափորման նորմաների կատարման ստուգումը, շրջանառության հաշվառման կազմակերպումը.

թ) սեկցիայի շենքի պահպանումը, հականըշեջային գույքի պիտանիության և այլ գործերի ստուգումը.

ժ) սեկցիայում մաքրություն պաշտպանելը, հատակները պարբերաբար լինալ տալը և այլն.

ժա) սեկցիայի աշխատակիցների անձնական առողջապահության, նրանց հագուստի մաքուր գրությունը, ձեռքերի մաքրությունը ստուգելը, նաև անձամբ ստուգել զետեղարանների, վաճառասեղանների, արկղների և մյուս գույքի մաքրությունը և այլն.

ժբ) պրեյսկուրանտների փակցման միջոցով տեղեկացնել գնորդներին ապրանքների տեսակների ու գների մասին.

ժգ) հետեւ ցուցափեղկերի սարքավորմանը, ցուցակագրված ապրանքների վրա փակցնել նրանց գները, ցուցափեղկերից ժամանակին հանել այն ապրանքները, վորոնք խանութում սպառվել են և թողնել ցուցափեղկերում միայն այն ապրանքները, վորոնց նմուշներից վաճառքի համար կան նաև խանութում.

ժդ) հետեւ, վորակեղի կշեռքները, կրոաքարերը և մյուս կշռաչափերը լինեն միանգամայն կանոնավոր վիճակում և յենթարկվեն պարտադիր ստուգման ու կնքման՝ չափերի ու չափա-

յին պարագաների ԽՍՀՄ Ժողկոմիուրին կից չափերի և կշիռների Կոմիտեյի տեղական մարմինների կողմից.

ժյե) մասնակցել յուրացումների ու հափշտակումների դեպքերը յերեան հանող ակտերի կազմելուն և ստորագրելուն.

ժը) հրահանգել վաճառողներին, նրանց պարտականությունների սահմանի և աշխատանքի տեխնիկայի մասին (ապրանքների դասավորումը, ապրանքների բաց թողումը, գնորդներին սպասարկելը և այլն).

ժթ) սեկցիայի աշխատողների միջև սոցիալիստական մըրցում և հարվածայնություն կազմակերպելը, ստախանովական մեթոդների լայն գործադրումը և այդ մեթոդների յուրացումը սեկցիայի բոլոր աշխատակիցների կողմից:

150. Սեկցիայի վարիչը պարտավոր և ապահովել այն, վորագանողների կողմից դեպի գնորդները ցույց տրվեն քաղաքավարի վերաբերմունք:

Գնորդների և վաճառողների միջև առաջ յեկած վորեւ թյուրիմացության դեպքում՝ սեկցիայի վարիչը պետք ե ձեռք առնի միջոցներ անկողմնապահ կերպով հարթելու այդ թյուրիմացությունը:

151. Սեկցիայի վարիչը պարտավոր և ուսումնասիրել գնորդների պահանջները, հավաքելով վաճառողներից գրավոր ու բանավոր տեղեկություններ, ապրանքների հանկության, տեսակների մասին, համաձայն գնորդների պահանջների:

152. Սեկցիայի վարիչը պարտավոր և հոգալ վորակեպի սեկցիայում լինի անընդհատ առեւտրի համար բավականաչափ ապրանք և ժամանակին ձեռք առնի միջոցներ լրացնելու ապրանքների պաշարը: Ապրանքների պաշարը լրացնելու ժամանակ առաջ յեկած դժվարությունների դեպքում՝ խանութի սեկցիայի վարիչը եր գերեկցիայի միջոցով պետք ե աշխատի եր ժամանել անհրաժեշտ ապրանքները:

153. Ցերե խանութի սեկցիայում կուտակված են ապրանքներ, վորոնց պաշարը մեծ ե և նրանց յերկարատև պահպանման ընթացքում յենթակա յեն փացման, այդ դեպքում սեկցիայի վարիչը պարտավոր և իր ժամանակին գրավոր կերպով այդ մասին տեղեկացնել խանութի դիրեկցիային, վորակեսպի այդ ավելորդ ապրանքները դուրս գրվեն և ուղարկվեն այլ խանութներ կամ բաղան: Միենդյան ժամանակ սեկցիայի վարիչը ձեռք

առնում միջոցներ, վորպեսզի կանխի տվյալ ապրանքները փչացումից:

154. Սեկցիայի վարիչն իրավունք չունի ի պահ ընդունել այնպիսի քանակի ապրանքներ, վորոնց հնարավորություն չկատեղավորել հարժար շենքերում, վորոնք ապահովեն այդ ապրանքների վորակը:

155. Սնցած ամիսների աշխատանքի փորձի հիման վրա և գնորդների ապրանքային ասսորտիմենտին վերաբերող պահանջների համաձայն, նաև սեկցիայի ապրանքների բաց թողման կարողությունը նկատի առնելով, սեկցիայի վարիչն աշխատակիցների հետ միասին կազմում և իր սեկցիայի ապրանքաշրջանառության պլանը, ցույց տալով պահանջած ապրանքների տեսակները, նրանց ստացման աղբյուրները և ներկայացնում ե կազմը ված պէտքն իսանութիւնի դիրեկցիային՝ ի հաստատություն:

156. Սեկցիայի վարիչը պարտավոր և աշխատանքի գալ 15 ըռպե առաջ, խանութը սահմանված ժամանակին բանալու համար:

157. Աշխատակիցների գալուց առաջ սեկցիայի վարիչը ստուգում ե վաճառասեղանի վիճակը և պատրաստում ե սեկցիան առևտուի համար. այսինքն զետեղարաններից հանում և լրացնում ե սեկցիայում յեղած ապրանքները, դարակներից վեր բերում և դասավորում ե վաճառասեղանի վրա, կատարում ե սանիտարական ստուգում, մաքրում ե փողին, փոխում ե մարլան, ճանձառպան թերթերը, ստուգում ե ողափոխիչները (ՎԵՆՏԻԼԱՏՈՐ) և այլն:

158. Յերբ խանութի բացման ժամանակ սեկցիայի աշխատակիցները լիովին ներկա չեն աշխատանքին, այդ դեպքում սեկցիայի վարիչը պարտավոր ե խանութի դիրեկտորի կամ նրա ողնականի թույլտվությամբ կատարել աշխատանքի բաժանում սեկցիայի ներկա յեղող աշխատակիցների միջև:

159. Սեկցիայի վարիչը պարտավոր ե սահմանված կանոնների հիման վրա ստուգել սեկցիայում յեղած մեխանիզմները (ապահովակտրիչներ և այլն) և մյուս ապահովատները, ստուգել վաճառողների համար անհրաժեշտ փաթաթման նյութերը, մըկրատները, մետրերը, համրիչները, չեկի գրքույկները և սրված մատիտները:

160. Սեկցիայի վարիչը և նրա ողնականը իրենց պարտականություններին անցնելիս, պետք ե ծանոթանան այս «Կանոնների» բովանդակության հետ և ստորագրեն, վոր այդ «Կա-

նոնները» նրանց կողմից ընթերցված, ըմբռնված և ընդունված ե անշեղ գործադրության համար:

### III. ՎԱՃԱՌՈՒԹՅԻ ԻՐԱՎՈՒԽՆՔՆԵՐԸ ՅԵԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

161. Վաճառողն իր աշխատանքի ասպարեզում դեկավարվում ե այս «Կանոններով», խանութի դիրեկտորի, նցա ողնականի կարգադրություններով և ցուցմունքներով և նրանց առաջ պատասխանատությունների և առանձին հանձնարարությունների համար:

Մանրականությունն առ պարագում, յերբ խանութում գոյություն ունեն սեկցիաների (բաժինների) վարիչներ, վաճառողը վորպես կանոն, ստանում ե կարգադրությունները ու ցուցմունքները խանութի դիրեկտորից և նրա ողնականից սեկցիայի վարիչների միջոցով, վորոնց տվյալ վաճառողը յենթարկվում է:

Վաճառողը պարտավոր ե կազմակերպելիր աշխատանքը սոցիալիստական մրցության և հարվածայնության հիման վրա, դործադրելով աշխատանքի ստախանովյան մեթոդները:

162. Աշխատանքից առաջ վաճառողը պարտավոր ե.

ա) ապահովել դարակներում և վաճառասեղանի մոտ անընդհատ առևտուի համար անհրաժեշտ քանակի ապրանքներ՝ լրիվ ասսորտիմենտով: Այս կամ այն ապրանքի բացակայելու դեպքում վաճառողը պարտավոր ե այդ ապրանքը ստանալու համար պահանջ ներկայացնել խանութի սեկցիայի վարիչին կամ դիրեկտորին, ապրանքներով լրացնելու համար.

բ) դասավորել ապրանքները՝ գնորդների համար տեսանելի ձևով և ստուգել արդյոք ապրանքների վրա կացրած և յառիկներ, վորոնք ցույց են տալիս ապրանքի տեսակը և դինը:

գ) ստուգել արդյոք բոլոր յեղած ապրանքները վորակավոր են, թե վոչ, անվորակ ապրանքներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել սեկցիայի վարիչին (խանութի դիրեկտորին) և թույլ չտալ այդ ապրանքի վաճառքը.

դ) ստուգել գույքի և գործիքների վիճակը, վորոնք ոգտագործում են վաճառողի կողմից (կեռքներ, դանակներ և այլն) և նրանց անկանոն լինելու դեպքում այդ մասին տեղեկացնել և սեկցիայի վարիչին (խանութի դիրեկտորին), անկանոն գործադրությունը կատարելու համար:

ծիրճները վորաբինելու նորելով, իսկ հնարավոր գեղքերում դեռանորդել այդ գործիքները.

յե) ստուգել, մաքուր և արդյոք ապրանքների դարակները և իր աշխատանքային վաճառասեղանը:

163. Վաճառողը պարտավոր և գնորդին սպասարկելու ժամանակ քաղաքավարի վարչել նրա հետ, ուշադրությունը լսել նրա պահանջը և տալ բացարություն ու տեղեկանք ապրանքների վորակի, յեղած ապրանքների տեսակների, արտիկուլների և ապրանքների գների մասին, ապահովելով գնորդին հանդիսատ, առանց աճապարելու ընտրել իր ուղած ապրանքը, նաև տալով գնորդին խորհուրդներ ու ցուցմունքներ այդ բովածին բացակայող ապրանքների տվյալ տեսակների ու արտիկուլների փոխարեն վերցնելու այլ տեսակի ու սորտի ապրանքներ:

164. Ապրանքների բաց թողման ժամանակ վաճառողը պարտավոր և պահպանել գնորդների սպասարկման հերթականությունը և այն դեպքում, յերբ վաճառողի ապրանքն սկսում և սպառվել, վաճառողը պարտավոր և այդ մասին դգուշացնել գնորդներին, վորակների նրանք իրուր չսպասեն:

165. Վաճառողը պարտավոր և հաշվել բաց թողնվող ապրանքների գումարը, պարզ արտասանել վճարվելիք փողի գումարը, չեկը ստանալիս պարզ կերպով հայտնել չեկի գումարը, մանրադին ստուգել չեկի վրա նշված ամսաթիվը, նրա հերթական համարն ու մակագիրը (շիֆրը) և ապա պատռել անցկացնելով այդ չեկը յերկաթացցին:

166. Վաճառողը պատասխանատու յե բաց թողնված ապրանքի արժեքի ճիշտ հաշվելու, ինչպես նաև բաց թողնված ապրանքների համար, համապատասխան պրեյսիկուրանտային գներին:

167. Վաճառողը պարտավոր և ապրանքը բաց թողնել գնորդին մաքուր քաշով և լրիվ չափով: Այդ նպատակով, վաճառողը պարտավոր և հետեւ իր վաճառատեղում յեղած պարագաների (կշեռքներ, չափեր և այլն) կանոնավոր վիճակին, իսկ անկանոնություններ յերևան հանելու դեպքում, վաճառողը պարտավոր և գաղարեցնել այդ պարագաների ողտագործումը և պահանջել խանութի վարչությունից տալ կանոնավոր պարագաներ:

Վաճառողը պարտավոր և կշեռքները դնել հորիզոնական դիրքով և գնորդի համար տեսանելի տեղում, վորակների գնորդը կարողանա տեսնել ապրանքների կշումը: Ցիֆերբլատային կշեռք-

ները պետք եւ դնել այնպես, վոր նրա ցիֆերբլատն ու կշեռքի ուղաքը գնորդին պարզ յերևա:

Ապրանքները կշռելու ժամանակ վաճառողը պարտավոր և կշեռքների թամսերի վրա ապրանքները և կշռաքարերը գնել զգուշ, ապանց տատանումների և հարվածների և ապրանքը «բետանժե» կոչով սեղանի կշեռքի վրայից վերցնել առնվազն իրար հետեւից յերկու տատանումից հետո և ցիֆերբլատային կշեռքների ուղաքը յերկու կողմից հավասարակշռությունը ցույց տալուց հետո:

Յուրաքանչյուր կշռումից հետո կշեռքների թամսերի վրայից պետք եւ վերցնել ապրանքների հետ նաև կշռաքարերը:

Կշեռքի թամսերը յուրաքանչյուր կշռումից հետո պետք եւ կշռված ապրանքների մնացորդներից մաքրել:

168. Արդեւլում և վաճառողին ոգտագործել. ա) կշռաքարերը վոչ իր անմիջական նպատակին (մեխեր խփելու, արկղներ բանալու և նման գործերի համար), բ) ժամկետներն անցած կնիքներ ունեցող կշռություններն ու կշռաքարերը, նաև չկնքված կշեռքներ ու կշռաքարերը, գ) կեղտուղած կշեռքները և կշռաքարերը:

169. Ապրանքներն ոժանդակ շենքերից վաճառատեղը փոխադրելիս, նմանապես գնորդին հանձնելու ժամանակ՝ վաճառողը պարտավոր և մանրադին ստուգել բաց թողնվող ապրանքի վորակը և նրա գնի ճշտությունը: Անվորակ կամ փչացած ապրանք հայտնաբերելիս, վաճառողը պարտավոր և այդ մասին անմիջապես հայտնել խանութի վարչության, համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար և վաճառքի հանել այդ ապրանքը:

170. Ապրանքների բաց թողման ժամանակ առաջ յեկած թյուրիմացությունը պարզելու համար վաճառողը պարտավոր և կանչել խանութի գիրեկտորին կամ սեկցիայի վարիչին՝ առանց գնորդին ուղարկելու նրանց մոտ:

171. Յուրաքանչյուր վաճառող պարտավոր և սիստեմատիկորեն հաշվի առնել հաճախ պահանջ ունեցող ապրանքների անունները, տեսակները և արտիկուլները, այդ ապրանքների ցուցակագրման մասին ամեն որ հայտնելով խանութի վարչությանը:

172. Վաճառողը պետք եւ իր աշխատանքային տեղը կարմակերպի այնպես, վոր վողջ գույքը, փաթթման նյութերը, գործիքները (գանակներ, պատառաքաղներ, թիակներ, ունելիներ և այլն) պահպեն նրանց համար վորոշված տեղերում:

173. Վաճառողը պարտավոր և հետեւ վորպեսպի նրա աշխա-

տանքային տեղում չկհնկն այնպիսի առարկաներ, վլրոնք անմիշապես կապ չունեն գնորդների սպասարկման հետ (գատարէլ տողակներ, պարկներ, բանկաներ, շշեր, ավելորդ գույք և այլն), և վաճառասեղանը զբաղեցնել գնորդների բերած ամաններով, զամբյուղներով և նման իրերով:

174. Վաճառողը պարտավոր ե բոլոր դեպքերում, խանութիւնի կտորի կարգադրության համաձայն՝ մասնակցել ավրանքների մասցորդների ցուցակագրման աշխատանքներին:

175. Վաճառողը պարտավոր ե խանութիւնի վարչության ցուցմունքների համաձայն, կատարել ավրանքների ընդունում և վաճառքից առաջ ավրանքների նախապատրաստում (նախապես կշռում և կապում, քանդում և այլն) ուղարձութելով այդ բանի համար գնորդների սպասարկումից դուրս իր ազատ ժամանակը:

176. Ավրանքը բանալու դեպքում վաճառողը պարտավոր ե խնայող վարվել տարայի հետ, թույլ չտալով նրա կոտրատումը և միասումը, նմանապես խնայող լինել նրա պահպանման ժամանակ:

177. Վաճառողը պարտավոր ե իր աշխատանքային տեղը պահել որինակելի մաքուր և ապրանքների պահպանման և բացթողման սանիտարա-առողջապահական պահանջներին համապատասխան:

Այդ նպատակով վաճառողը պարտավոր ե.

ա) հետեւ մթերքներ պարունակող ամանների լիակատար մաքրության:

բ) պահել սահմանված կարգով խանութիւնի բակներ, դանակներ, կացիններ, կտրիչ գործիքներ և այլն:

գ) հագնել աշխատանքի ժամանակ մաքուր և դուրակի արտ հագուստ:

դ) աշխատանքի ժամանակ ձեռքերը պահել մաքուր, յեղունիները կարև կտրված և այլն:

վաճառողին արգելվում ե աշխատանքի տեղում ծխել:

178. Վաճառողը հաշվում ե որվա ստացված վաճառքի դուրմարը յերկաթացցին անցկացված չեկերի հիման վրա:

179. Այն խանութներում, վորտեղ բացակայում ե դրամարկելը և դրամ ընդունելու պարտականությունն ընկնում ե վաճառողի վրա, վերջնս նյութապես լիակատար պատասխանատու յեղաճառքից գոյացած դումարի ու վաճառքած ավրանքների համապատասխան լինելու համար և ամեն որ, խանութիւնի դիրեկտու-

րի կողմից սահմանված ժամկետին, հանձնում ե որական վաճառութիւնի գումարը՝ ստորագրությամբ:

180. Վաճառողն իր պարտականությունների կատարման անցնելուց առաջ պետք ե ծանոթանա այս «Կանոնների» բովանդակության հետ և ստորագրություն տա այն մասին, վոր իրոք նա կարգացել յուրացրել և ընդունել և ի ղեկավարություն:

## VI. ԽԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՆՉԱՊԱՀԻ ԽՄԱԿՈՒՆՔՆԵՐԸ ՅԵԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

181. Գանձապահն աշխատանքի յեղանգում խանութիւնի կտորի կողմից: Գանձապահին սահմանված կարգով աշխատանքի ընդունելը ձեւակերպում ե վերադաս առևտրական կազմակերպությունը:

182. Գանձապահն իր աշխատանքի ընթացքում յենթարկվում և խանութիւնի դիրեկտորին, իսկ խոշոր խանութներում, վորտեղ գոյություն ունեն մի քանի դրամարկելներ և ավագ-գանձապահ, գանձապահը յենթարկվում ե ավագ գանձապահին:

183. Գանձապահն ընդունում ե դրամը գնորդներից՝ նրանց հայտնած դումարի համաձայն կամ վաճառողների կողմից բացթողնող չեկերի հիման վրա: Գանձապահը՝ ստանում ե գնորդից դրամը և նրան տալիս ե չեկը հետեւյալ կարգով:

ա) գնորդից դրամն ստանալիս, գանձապահը պարտավոր ե պարզ կերպով հայտնել դրամի գումարը և այդ դրամը գնել առանձին, գնորդից աչքի առաջ:

բ) գնորդին լիովին հետ տալ մանրուքը (սճաշա):  
գ) վերջնական հաջարքից հետո տալ գնորդին չեկը (կամ ապրանքի չեկի պատճենը՝ դրամի ստացման նշումով և ոռուզնի դրամանիշներ):

դ) ապա գնորդից ստացված դրամը դնել դրամարկով:  
Ծանօթության.—Արգելվում ե մանրուքի փոխարեն առաջարկել գնորդին վորտեղ ապրանք (լուցկի և այլն):

184. Գանձապահն պարտավոր ե.  
ա) աշխատանքից առաջ կարգի բերել դրամարկով ապարատը, մանրազնին ստուգել նրա վիճակը (մաքրել խողանակով ապարատի շտամպերը և թվերը, ներկով ծածկել գլանը և բարձերը և այլն) և նրանց անկանոնության դեպքում ձեռք առնել միջոցներ վերացնելու յեղած դեֆեկտը:

բ) ստուգել դրամարկղային և կոնտրոլ ժապավենների անհրաժեշտ քանակը և համապատասխան վորակը (ոռուլոնի դրամարկղի վրա յեղած դրամանիշները).

գ) խանութի դիրեկտորի ներկայությամբ գրել դրամարկղի մատյանում հաշվիչից ցուցանիշը, փակել հաշվիչը և հաշվիչի բանալին հանձնել խանութի դիրեկտորին ի պահ (ոռուլոնային դրամարկղի վրա աշխատելիս գրել դրամարկղի մատյանում աշխատանքոց առաջ յեղած ոռուլոնային դրամանիշների առաջին համարները).

դ) խանութի դիրեկտորի հետ միասին ստորագրել կոնտրոլ ժապավենների վրա, նշելով տարին ու ամսաթիվը (ամիսը, որը, ժամը և ըոպեն):

յի) ուշադրությամբ հետևել վոր աշխատանքային որվա ընթացքում կոնտրոլ դրամարկղային ժապավենը չկարվի (գանձապահին չի թույլատրվում կայցնել ժապավենները միմյանց հետ, իսկ ժապավենների ծայրերի կարվելու դեպքում ստորագրութում և խանութի դիրեկտորի կողմից).

զ) հետևել վոր կոնտրոլ ժապավենի և չեկերի վրա մուծած գումարը գրվի պարզ և վորոշ (պարզ հետք չունեցող գումարի չեկը պետք և անպայման կոնտրոլ ժապավենը ստուգելիս ստորագրվեն գանձապահի և դիրեկտորի կողմից, կրկնելով չեկի գումարը).

ե) աշխատանքային որվա ընթացքում խանութի դիրեկտորի ցուցմունքի համաձայն փոխել շիֆրը (չեկերի վրա դրված պայմանական նշանը), նաև փոխել ժապավենի գույնը:

185. Գանձապահը պարտավոր և ունենալ դրամարկղում կանխիկ մանր դրամ այն քանակությամբ, վորքան վոր անհրաժեշտ և գնորդներին արագ կերպով բավարարելու և նրանց հետ ձիշտ հաշվարկում կատարելու համար:

186. Դրամարկղային չեկերով (կամ ուրիշ փաստաթղթերով), դրամը վճարելու դեպքում, թույլ և տրվում դրամ ստանալ միայն ժամանակ, յերբ նրանց վրա լինի խանութի դիրեկտորի ստորագրությունը, և համեմատվի այդ ստորագրությունը գանձապահի մոտ գտնվող ստորագրությունների իսկականի հետ, նմանապես ստուգվի չեկի շիֆրը և համարը:

187. Հաշվառքի ժամանակ ծագած թյուրիմացությունների դեպքում գանձապահը չպետք և հակածառի դնորդին, այլ այդ

դեպքի մասին պետք և անմիջապես հարուցի խանութի դիրեկտորին:

188. Դրամարկղում պետք և պահպի բողոքների գիրքը վորակին գանձապահը պարտավոր և գնորդների առաջին պահանջի դեպքում անմիջապես նրանց համար այդ բողոքները կամ առաջարկությունները գրելու համար:

189. Դրամարկղի շենքում խստիվ արդեմում և կողմանակի անձնությունը նաև առևտորական ձեռնարկության աշխատողների մուտքը, բացի խանութի դիրեկտորից, նըտ ոգնականից և ավագ գանձապահից:

190. Խանութի աշխատանքն ավարտելուց հետո, գանձապահը պարտավոր և վաճառքից ստացված դրամները լիովին կարգի բերել համրել փաթաթել կապոցներով, յուրաքանչյուր կապոցի վրա մակարեւ հաշվել դրամական վաճառքից դոյացած ընդհանուր գումարը և համեմատել վաճառքի ընդհանուր գումարը որվա ընթացքում բաց թողած չեկերի գումարի հետ: Դրամարկղի վաճառքի գումարն ստուգվում և գանձապահի կողմից, խանութի դիրեկտորի կամ նրա ոգնականի պարտագիր ներկայությամբ:

191. Դրամարկղը հանձնելիս գանձապահը պարտավոր և սկզբում հանձնել դրամները և ունեցած փաստաթղթերը և ապա գրել հաշվիչի համարը, վոր կատարվում և խանութի դիրեկտորի կողմից: Դրամարկղի մատյանում այդ համարը գրանցվում և գանձապահի և խանութի դիրեկտորի ստորագրությամբ:

192. Դուրս տրված (կամ գուրս գրված) և գնորդի կողմից վերադարձված չեկերի համար կաղմվում և հատուկ ակտ, ցույց տալով չեկերի համարները, գումարը և նրանց բաց թողման ժամանակը, վորից հետո այդ չեկերը հանցցվում են և նրանց գումարները գուրս են գրվում առևտորական ձեռնարկության որվա վաճառքի գումարի հաշվից:

193. Աշխատանքից հետո դրամները համբելու և ստուգման վերջում գանձապահը պարտավոր և գրել որվա վաճառքի գումարի մասին տեղեկանք և հանձնել կանխիկ գումարն ու ծախսերի փաստաթղթերը ստորագրությամբ խանութի դիրեկտորին (կամ ավագ գանձապահին):

194. Գանձապահը կրում և լրիվ նյութական պատասխանատվություն դրամարկղում փողի պակասորդների համար:

195. Գանձապահը պարտավոր և տանել դրամարկղային

մատյան սահմանված ձևով, վորի մեջ ամեն որ գրանցվում են կանխիք դրամի մուտքն ու յելքը:

196. Գանձապահը, իր պարտականություններին անցնելուց առաջ, պետք ե ծանոթանաւ այս կանոնների մեջ մեկնաբանված պարտավորությունների հետ, ինչպես նաև դրամարկղին, դրամի հանձնման և դրամային վաճառքից գոյացած գործարի ծախսման կարգի մասին բաժնի հետ և սոորագրություն տա, վոր նու այս «Կանոնները»յուրացրել ե և ընդունում ե ի կատարումն:

V. ԽԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԳԼԽԱՎՈՐ (ԱՎԱԳ) ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

197. Խանութների գլխավոր (ավագ) հաշվապահները գործում են կառավարության որենքների ու կարգադրությունների և գերադաս որդանների հրահանդիների համաձայն: Հաշվապահները վարչական կարգով յենթարկվում են անմիջապես խանութի դիրեկտորին, իսկ հաշվապահական հաշվառման կարգի ու մեթոդների և հաշվապահական հաշվետվութայն գործում յենթարկվում են այն վերադաս կազմակերպության հաշվապահն, վորի ցանցի մեջ մտնում ե տվյալ խանութը:

Գլխավոր (ավագ) հաշվապահների նշանակումը, հեռացումը և փոխումը կատարում ե վերադաս կազմակերպությունը խանութի դիրեկտորի առաջարկությամբ՝ համաձայնեցնելով վերադաս կազմակերպության գլխավոր հաշվապահի հետ:

198. Խանութում մի քանի հաշվային աշխատողներ լինելու դեպքում՝ վերջնները յենթարկվում են տվյալ խանութի գլխավոր (ավագ) հաշվապահն:

199. Գործառումների կանոնավոր ու ժամանակին ձևակերպման և հաշվապահության սահմանված հաշվետվային տեղեկությունների վերաբերմամբ՝ խանութի գլխավոր (ավագ) հաշվապահի կարգադրությունը պարտադիր ե խանութի բոլոր աշխատողների համար: Գլխավոր (ավագ) հաշվապահի ցուցմունքները և կարգադրությունները չկատարողները կամ խախտողները կանչվում են կարգապահական և դատական պատասխանաւովության:

200. Խանութի գծով տարվող բոլոր ոպերատիվ կարգադրությունները, վորոնք կապ ունեն հաշվապահական հաշվառման կամ հաշվետվության հետ, այդ թվում նաև հաշվապահության հաստիքների սահմանումը և հաստատումը, խանութի բոլոր հաշվային աշխատողների ընդունումը, փոխումը և հեռացումը և պաշտոնների սահմանումը, աշխատավարձի վճարումը և պարզեցարումները կատարվում են խանութի վարչության կողմից՝ սահմանված կարգով, գլխավոր (ավագ) հաշվապահի համաձայնությամբ:

201. Խանութի գլխավոր (ավագ) հաշվապահի և գիրեկտորի միջև ծագած տարածայնությունները վճռում ե վերադաս կազմակերպությունը:

202. Խանութի հաշվեկշռումները և հաշվետվությունները ստորագրվում են աղմինիստրացիայի և գլխավոր (ավագ) հաշվապահի կողմից:

Դրամական, նյութական, գույքային, հաշվառքային և վարկային բոլոր դոկումենտները, վորոնք հիմք են ծառայում գրամարկղից փող ստանալու կամ գրամարկղը փող մուծելու, նմանապես այն գոկումնենաները, վորոնք հիմք են ծառայում հաշվապահական գրանցումների համար, վավերացվում են խանութի գլխավոր (ավագ) հաշվապահի կողմից:

Ծանօթարարական.—Վերև հիշված բոլոր դոկումենտները, յերբ նրանք չեն վավերացված գլխավոր (ավագ) հաշվապահի ստորագրությամբ, համարվում են անվավեր:

203. Խանութի գլխավոր (ավագ) հաշվապահներ՝ հաշվառման հաշվետվության համար սահմանված կարգին հակառական հաշվետվության համար սահմանալիս՝ պարտավոր են, մինչև այդ կարգադրությունը կատարելը, գրավոր դիմել նման կարգադրություն անող խանութի դիրեկտորին, ցույց տալով այդ կարգադրության անորինականությունը:

Այդ կարգադրությունը գրավոր կերպով հաստատվելու դեպքում խանութի գլխավոր (ավագ) հաշվապահը պարտավոր ե այդ կարգադրությունը կատարել՝ այդ մասին անմիջապես տեղեկացնելով վերադաս կազմակերպության դեկավարին:

Մինչեւ ժամանակ գլխավոր (ավագ) հաշվապահը պարտավոր ե այդ մասին հաղորդել շրջանի կամ քաղաքի Փինանսական բաժնին:

Այն դեպքում, յերբ խանութի գլխավոր (ավագ) հաշվապահը

ստանում ե կարգադրություն կատարել այնպիսի գործողություն, վոր պատժվում ե քրեական կարգով, նա իրավունքունի չկատարել այդ կարգադրությունը, անմիջապես հայտնելով այդ մասին վերև հիշված որդաններին:

204. Գլխավոր (ավագ) հաշվապահները սխալ տեղեկություններ և հաշվետվություններ տալու համար կանչվում են դատական պատասխանատվության:

205. Գլխավոր (ավագ) հաշվապահները՝ դիրեկտորների հետ միասին, կրում են լիակատար պատասխանատվություն ֆինանսական և նախահաշվային դիմուլինայի համար, հաշվապահական հաշվետվությունների կանոնավոր կազմելու և տվյալ խանությում հաշվապահային-հաշվառման դրության համար, նմանապես հաշվապահային հաշվառման բնդիանուր դրվածքի համար՝ ինչպես խանությում, այնպես ել նրա բաժիններում, վորտեղ ինքնուրույն կերպով տրվում և հաշվապահային հաշվառում և ներկայացնում են ավարտված հաշվապահական հաշվետվություններ:

206. Հաշվառումը և հաշվետվությունը գիտակցաբար խառնաշփոթելու, գիտամամբ սխալ տվյալներ տալու, հաշվառման և հաշվետվության կանոնները չարամտորեն խախտելու, պհանի խախտման կամ գերակատարման մասին դիտավորյալ կերպով անձիշտ տեղեկություններ հաղորդելու համար, յերբ թվածդողությունները նպատակ են ունեցել հափշտակել սոցիալիստական սեփականությունը կամ այդ հափշտակման հետքերը թագյուններ, յերբ այդ հանցագործությունները կատարվում են խանութի գլխավոր (ավագ) հաշվապահների կողմից, այդ դեպքում նրանք կանչվում են քրեական պատասխանատվության:

ԽՍՀՄ ԴԱՏԱԽԱԾԻ ՅԵՎ ԽՍՀՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԻ  
Հ Բ Ա Մ Ա Ն Բ Հ Ե 63/24

1939 թ. մարտի 31-ին

Քաղ. Մուկու

Պետական առեւտրի սիստեմի առեւրական կազմակերպություններում տեղի ունեցող հափշտակումների և վատնումների դեմ ուժեղ պայքար տանելու և այդ հանցագործությունների մեջ բոլոր մեղավորներին, վորոնց թվում նաև դիտավորյալ կերպով հափշտակումներից և վատնումներից ոգտվող անձնավորություններին, քրեական և նյութական պատասխանատվության կանչելու նպատակով հրամայում ենք. Պետական առեւտրի մեջ յերեվան հանված հափշտակումներին և վատնումներին վերաբերող գործերի հարուցման, հետաքննման և դատաքննման ժամանակ, նաև այդ հափշտակումների ու յուրացումների հետեւ վանդակության վեճական դեպում՝ զեկավարվել լրիվ ծավալով հրատարակված՝ ԽՍՀՄ Արդարադատության ժողկումատի և ԽՍՀՄ Դատախանության 1939 թ. վետրվարի 28-ի «Սպառողական կոռպերացիայում վատնումների ու հափշտակումների գործերի հետաքննման դատաքննման մասին» № 49/1—Ա. 21 հրահանգով:

ԽՍՀՄ Դատախանոգ՝ Ա. ՎԻՇԻՆՍԿԻ

ԽՍՀՄ Արդարադատության ժողովադատական կամիսար՝ Ն. ՌԻԶԿԻՆ

ՅՈՒՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՓԾՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՀԵՏԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՏԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՂՊԵՐԱՑԽԱՅՅՈՒՄ

1939 թ. փետրվարի 28-ին, № 49/1—Ա. 21.

Սպառողական՝ կոռպերացիայում յուրացնողների և հափշտակողների դեմ պայքարն ուժիղացնելու նպատակով և այդ հանցագործությունների մեջ մեղավորներին, նաև նրանց ընտանիքի անդամներին և այլ անձանց, վորոնք ոգտվում են յուրացած ու հափշտակված միջոցներից, նյութական պատասխանատվության կանչելու համար, ԽՍՀՄ Արդարադատության ժողկոմը և ԽՍՀՄ դատախազը առաջարկում են՝ Սպառողպերացիայի ցանցում տեղի ունեցող յուրացումների ու հափշտակումների շուրջը գործ հարուցելու, հետաքննելու և դատաքննելու ժամանակ նաև պատճառած վաստի հատուցման դեպքում՝ դեղավարվել ներքոնիշյալ ցուցմունքներով։

Ա. Սպառողական կոռպերացիայի առևվտական կազմակերպություններում յուրացումների յերեվան հանումը յեվ այդ մասին հատիւնական որգաններին հայտնելը

1. Սպառողպերացիայի կազմակերպությունների դեկադարները պարտավոր են հափշտակումների, յուրացումների և պակասումների մասին անմիջապես հայտնել հետախուզական որդաններին, հենց վոր այդ կազմակերպություններին հայտնի կլինի կատարված հանցագործությունների մասին յեղած փաստերը, բայց և այնպես այդ ժամանակ յեղած նյութերը պետք են ներկայացնել կազմակերպության (Ճենարկության) կամ նյութապես պատասխանատու անձանց ստուգումից 10 օրից վոչ ուշ։

2. Հետախուզական որդաններին ներկայացրած դիմումի մեջ պետք են պարզաբանել հետեւյալ հանգամանքները. ինչումն է կայանում հանցագործությունը՝ ինչ գումարի յե համառու նյութական արժեքների պակա սումը կամ հափշտակումը կամ վատնումը, վորտեղ և լատարված տվյալ հանցագործությունը, յերբ և այդ համար յագործությունը յերեվան հան-

վել և կոռպերատիվ կազմակերպության կարծիքով ում պետք է կանչել քրեական պատասխանատվության, մատնանշելով նաև այն անձանց անունները, վորոնք տվյալ գործի համար կարող են վկա լինել:

Դիմումն ուղարկվում է ինչպես դատախազության որդաններին, այնպես ել միլիցիային, այն վայրում, վորտեղ կատարված և հանցագործությունը ՌԽՍՖՀ Հանրապետության Քրեական դատավարական որենսդրքի 108 հոդվածի և մյուս միութենապեկան հանրապետությունների Քրեական դատավարական որենսդրքի համապատասխան հոգվածների հիման վրա։

3. Դիմումի մեջ պետք է տրվեն պատասխանատվության յենթակա անձնագործության մասին լրիվ տեղեկություններ, այսինքն՝ նրա անունը, ազգանունը և հոր անունը, նրա աւարտքը, ընակարանի հասցեն, անձնագրի կամ ժամանակավոր վկայականի համարը, պաշտոնը և ավագանությունը կոռպերատիվ կազմակերպության մեջ նրա աշխատանքի ժամանակվա միջոցը։

Դիմումն անհրաժեշտ է կցել նաև պատասխանատվության յենթակա անձի լուսանկարը։

4. Քրեական հետախնդման հարուցման մասին ներկայացրած դիմումին պետք է կցել հետեւյալ գոկումենտները.

ա) Ստուգման ակտը, կամ արժեքների փաստական մնացորդների և հաշվապահական տվյալների (ինվենտարիզացիայի ակտը) համեմատման ակտը, ցույց տալ այդ ակտի մեջ, թե վորտեղ և ով ե կատարել հափշտակումը, յուրացումը կամ պակասումը և գործադրված են արդյոք որենքով նախատեսնված ապրանքների բնական պակասորդների գեղջեր այս դեպքում։

բ) բոլոր այն փաստաթղթերը, վորոնք ներկայացված են նյութապես պատասխանատու անձի կողմից՝ նրա հաշվետվության ժամանակ, բայց չի ընդունված հաշվապահության կողմից, նմանապես այն փաստաթղթերը, վորոնց վրա կատարված են ջնջումներ, քերումներ և անթույլատրելի ուղղումներ և այլն, բացատրելով, թե ինչու այդ փաստաթղթերը չեն ընդունվել հաշվետվությունը տալու ժամանակ և ինչումն ե կայանում նրանց թերությունները։

գ) այն անձնագործության բացատրությունը, վորի մոտ յերեան ե հանված հափշտակում, վատնում կամ պակասում, յերբ նրա կողմից տրված և այդ բացատրությունը։

նյութապես պատասխանատու անձի, վորի մոտ յերեան ե

հանմակել յուրացում, կազմված ակտի տակ ստորագրելուց հրաժարվելու մասին պետք ե մատնանշվի նույն ակտում, ստուգումը կատարողի, նաև ստուգմանը ներկա յեղողների ստորագրությամբ:

3. Եթե վերստուգվող անձը չի գալիս մասնակցելու ինվենտարիցացիային կամ վերստուգմանը, խանութների, պահեստների, ճաշարանների և այլ ձեռնարկությունների բացման ժամանակ, այդ դեպքում բացումը կատարվում է իշխանության տեղական որդանների ներկայացուցիչների պարագներ ներկայությամբ:

4. Եթե կոռապերատիվ կազմակերպությունը հարավորություն չունի ներկայացնել վերստուգման վերաբերմամբ նյութապես պատասխանատու անձի բացատրությունը (նրա ուղիղ տեղ մեկնելու և ներկայացնելուց խուսափելու դեպքում), կազմակերպությունը պետք ե ներկայացնի տեղեկանք այն մասին, վոր նյութապես պատասխանատու անձը ժամանակին կանչված ե ստուգմանը ներկա լինելու: Այդպիսի տեղեկանք ծառայում ե նյութապես պատասխանատու անձին ուղարկված նամակի պատճեններ:

5. Հետաքննող որդաններին ուղղված (համաձայն 1-ին կետի) դիմումը պետք ե ստորագրի կոռապերատիվ կազմակերպության ղեկավարը, վորի ցանցում գտնվում ե այն ձեռնարկությունը, վորտեղ յերեան և հանված տվյալ հանցագործությունը:

#### Բ) Յուրացումների գործերի հետաքննման մասին

6. Սպառկոռապերացիայի որդաններում յուրացումների և հափշտակումների գործերի հետաքննումը պետք ե ավարտվի հետաքննող որդանների կողմից՝ դիմումը ներկայացնելուց (2-րդ կետ) բոլոր անհրաժեշտ նյութերի հետ միասին (3-րդ, 4-րդ պունկտ) 10 որվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, յերբ պահանջվում ե հատուկ փորձաքննություն (եքսպերտիզա), այդ դեպքում հետաքննության ժամանակամիջոցը սահմանվում ե 20 որ: Այդ ժամկետը յերկարացնելու անհրաժեշտության բացարկը դեպքերում պետք ե ստանալ սանկցիա վերադադարակիցից:

7. Հետաքննող որդանները պարտավոր են քրեական պատասխանառվության յենթարկել, բացի կոռապերատիվ սեփականության հափշտակիչներից, նմանապիս այն անձանց, վորոնք

մեղավոր են հանցագործներին թագյնելու և պաշտպանելու գործում, վորոնք ոգտվել են յուրացման և հափշտակման միջոցներից, նմանապիս պատասխանառվության են կանչվում վերստուգող հանձնաժողովի նախագահները և այդ դեպքում, յերբ յուրացումները և հափշտակումները տեղի են ունեցել չնորհիվ նրանց անգործության (վերստուգման սահմանված կարգի խախտում կամ վերստուգիչ հանձնաժողովը յուրացումների ու հաշտակումների մասին ստացված դիմումների վերաբերմամբ ձեռք չի առել առանձին միջոցներ):

8. Քրեական հետաքննություն հարուցելու մասին դիմում ստանալիս (2-րդ կետ) հետաքննող մարմինները պարտավոր են ոգտագործել ներկայացված նյութերն իրենց գործավարության համար և անհրաժեշտության դեպքում տալ ցուցմունք դիմումու ու ավողին՝ ներկայացնելու լրացուցիչ նյութեր (մատնանշել, թե պահանջված նյութերից առանձնապես վոր նյութը):

9. Հետաքննող մարմինները, յուրացման ու հափշտակման մեջ մեղադրվողի գեմ հաստատված քրեական հետապնդման հետ միասին, պարտավոր են քաղաքացիական հայցն ապահովելու համար՝ հիմք ընդունելով ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկրմխորհի 1937 թ. ողոսասի 10-ի վորոշումը՝ նախնական կալանքի յենթարկել հանցագործների կայքն ու գույքը, նաև նրանց ընտանիքի անդամների և մյուս անձանց կայք ու գույքը, տեղը, վորոնք ոգտվել են հափշտակած ու յուրացրած միջոցներից՝ դնելով նախնական կալանք այդ կայք ու գույքի վրա՝ կոռպերատիվ կազմակերպությունների հասցրած վնասը հատուցելու համար:

10. Հետաքննող մարմինները պարտավոր են ձեռք առնել կտրուկ միջոցներ՝ հնատախուզելու կոռապերատիվ սեփականությունը հափշտակողներին, վորոնք թաքնված են, նրանց կայք ու գույքի, նրանց ընտանիքի անդամների և մյուս անձանց կայք ու գույքը, տեղը, վորոնք ոգտվել են հափշտակած ու յուրացրած միջոցներից՝ դնելով նախնական կալանք այդ կայք ու գույքի վրա՝ կոռպերատիվ կազմակերպությունների հասցրած վնասը հատուցելու համար:

11. Հետաքննող որդանները պարտավոր են յուրաքանչյուր գործի վերաբերմամբ 3 որից վոչ ուշ ծանուցել շահագրգուված կոռպերատիվ կազմակերպություններին՝ այդ գործերի քաղաքացիական հայցի ճանաչման կամ նրանց մերժման մասին, դատարանին՝ գործերի հանձնման կամ այդ գործերի դատաքննության կարձանան մասին:

Այն մեղադրյալների և կոնսերվատիվ կազմակերպությունների գանգատմաները, վերսնք գործ են հարուցել հետաքննական որգանների գործողությունների նկատմամբ, դատախազը պետք է քննի Յ որվա ընթացքում (ԽԽՍՁՀ Քրեական դատավարական ուժնենությունների հոդված 218 և միութենական հանրապետությունների Քր. դատավարական որենսգրքի համապատասխան հոդվածներ):

12. Նախնական քննության պրոցեսում հափշտակումների և յուրացումների գործերի վերաբերմաբ նշանակված հաշվապահական եքսպերտիզմն կատարվում և միութենական հանրապետությունների Ք. դ. որենսգրքում սահմանված դեպքերում և կարգով: Եքսպերտիզմի ծախսերը չպետք է կատարվի կոռպերատիվ կազմակերպության հաշվին: Կատեգորիկ կերպով արգելվում է կոռպերատիվ կազմակերպությանը հանձնարարել գործի հարուցման դեպքում կամ նրա հետաքննության ընթացքում կատարել եքսպերտիզմին յեղրակացություններ:

13. Հետաքննող որգաններին արգելվում և Սպառկոռպերացիայի մարմինների միջոցով ստանալ վերստուգում կատարող անձերից կամ վկաններից ցուցմունքներ: Բոլոր նման դեպքերում այդ անձերի հարցաքննությունը պարտավոր են կատարել հետաքննող մարմիններն անմիջապես:

Գ. Դատարանում յուրացումների մասին յեղած գործերի հնարյանը

14. Կոռպերատիվ միջոցների յուրացումների և հափշտակումների մասին դատարաններում ստացված գործերը պետք է քննին նախապատրաստական նիստում յերեք որից վոչ ուշ, իսկ դատական նիստում գործերը դատարանում ստանալուց տաս որից վոչ ուշ:

15. Սպառկոռպերացիայում կատարված յուրացումների և հափշտակումների մասին յեղած գործերը, վորտես կանոն, պետք և նայվեն տուժող կոռպերատիվ կազմակերպության վայրում, մեղադրության և պաշտպանության պարտադիր մասնակցությամբ:

Այդ գործերի վերաբերյալ դատական պլոցենների մասին պետք է լայն կերպով լուսաբանել մամուլում:

16. Սպառողական կոռպերացիայում կատարված յուրացումների և հափշտակումների մասին յեղած գործերը դատարան համանելու ժամանակ դատարանը պետք և ստուգի, թե արդյո՞ք

կատարված և որենքի պահանջը՝ նախնական կալանքի յենթարկելու պատասխանառվության կանչված անձերի գույքը, յեթե այս կամ այն պատճառով՝ կալանքի չի դրված, այդ դեպքում դատարանը վորոշում է կալանքի յենթարկել պատասխանառվության կանչվածների գույքը՝ այդ վորոշումն անմիջապես իրացնելով դատական կոռպերատիվի միջոցավ:

17. Կոռպերատիվ գույքի յուրացումների և այլ տեսակի հափշտակումների մասին յեղած գործի վերաբերյալ վճռի ժամանակ, իստորիկ հետեւել ԽՍՀՄ Գերազույն դատարանի ցուցամունքներին՝ հետեւյալի մասին:

ա) վոր յուրացման վերաբերող մեղադրանքը վերաբերակավորել վարպետ անփութության հետեւվանքով կատարված պակսորդ թույլ և արգում բացատիկ դեպքերում, յերբ դատարանը կպարզի վոր մեղադրյան իր վսահած արժեքները չի յուրացը իր շահերի համար.

բ) յուրացումների համար դատապարտվածներին տրվում և ուղղիչ աշխատանք, յեթե դատարանը յենելով՝ գործի հատուկ հանգամանքներից, հնարավոր և դանում չնշանակել պատժի խիստ միջոցներ, թույլատրվում և տանել նոր աշխատանքն ընդունալու հիմունքներով այն որգանների միջոցով, վորոնք դեկտիվաբում են ուղղիչ աշխատավորական գործերը, բայց վոչ ուղղիչ աշխատանք ծառայության տեղում (ԽՍՀՄ Գերազույն դատարանի 47-րդ պլենումի վորոշումը).

գ) վոր դատարանները մատնանշված գործերի վերաբերամամբ մեղադրական դատապահիներ հանելիս պետք է քննության առնեն յուրացումների և հափշտակումների համար դատապարտվողին՝ նյութական պատասխանառվության հետ կազմաձագալությունը առկա աշխատանքում սահմանափակելու հիմքերի առկայությունը:

Նման հիմքի առկայության դեպքում դատավճռի մեջ պետք և մատնանշվի, թե վոր աշխատանքն արդելվում և դատապարտվածին և արգելվի ժամանակամիջոցը (ԽՍՀՄ Գերազույն դատարանի 1936 թ. № 42 շրջաբերական նամակը).

18. ԽՍՀՄ հենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թվի ոգուտոսի 10-ի վորոշման 2-րդ հոդվածի հիման վրա՝ դատադիտ կայացնելիս անդայման պետք և վորոշել յուրացման, վատնման և հաշտակման հետեւանքով կոռպերատիվ գույքի վնասի հատուցումը՝ ինչպես դատապարտվածի գույքից, այնպես ել այն գույքից, վորը պատկանում է, ինչպես այլ անձանց, այնպես ել

դատապարտյալին, նաև գյուղացիական ընտանիքի ընդհանուր գույքից, վորի կաղմի մեջ մտնում և դատապարտյալը, նմանապիս ամուսինների ընդհանուր գույքից, յեթե հաստատվի, վոր այդ գույքը ձեռք և բերված հանցագործության հետեւվանքով ստացված միջոցներով:

19. Կոռպերատիվ կազմակերպության վնասի հատուցման մասին հարուցած քաղաքացիական հայցը, վոր պատճառված և վատնումների և հափշտակումների հետեւվանքով, պետք և դատաքանի կողմից քննվի քրեական գործի վորոշման հետ միասին այն մտքով, վորպեսզի դատավճոի մեջ վորոշի բոնագանձման ճիշտ գումարը՝ ուրիշ դատարանին, ԽՍՀՄ Ք. Դ. Ո. 329 հոդվածի և մյուս միութենական հանդապետությունների Ք. Դ. Ո. համապատասխան հոդվածների հիման վրա, բոնագանձման չափերի սահմանման հարցի քննության հանձնումը թույլ եւ տըրպում բացառիկ գեպքերում, ցույց տրվելով դատարանի կողմից այդ խնդրի հանձնման շարժառիթ հանգամանքները:

20. Այն գեպքերում, յերբ գործի հանդամանքները ցույց են տալիս հաշվառման գործի և նյութային արժեքների պահպանման կամ կադրերի ընտրության անկանոն դրվածքը կոռպերատիվ կազմակերպություններում, այդ գեպքում դատարանները պետք է այդ մասին հանեն առանձին վորոշումներ և ուղարկեն սպառկոռպերացիայի սխտեմի վերադաս կազմակերպություններին, այդ գործում միջոցներ ձեռք առնելու համար:

Դ. Առևտումների գործերի մասին կատարվող բանագանձումները

21. Կոռպերատիվ կազմակերպությունների ոգտին՝ դատարանի կողմից հանգած վճիռները և վորոշումները, վորոնք վերաբերում են վատնումներից և հափշտակումներից առաջացած վատներին, պետք և հաշվի առնվեն, և պարբերաբար ստուգի այդ բոնագանձումների կատարողականը:

22. Հետաքննող որդաններում կամ դատարանում գործի քննության ժամանակ կալանքի յենթարկված գույքը պետք և ուղղացիայի յենթարկվի դատական կատարածվի կողմից կատարողական թերթը ստանալուց 15 օրից վոչ ուշ: Այն գեպքում, յերբ կալանքի տակ գտնվող գույքի արժեքը բավական չի հանգնելու համար լիովին բոնագանձված գումարը, այդ գեպքում դատական կատարածուն պարտավոր և ձեռք առ-

նել միջոցներ յերեվան հանելու այլ գույքներ, վորոնց իրացումից կարելի յե ստանալ բոնագանձման գումարի տարբերությունը:

23. Այն գեպքում, յերբ դատապարտվածը, վորի վրա յև հաշվում կոռպերատիվ կաղմակերպության ոգտին բոնագանձված գումարից մնացած պարտքը, իր պատիժը կըել և կալանքի տեղում, բոնագանձումը պետք և զնել աշխատավորձի այն մասի վրա, վոր նրան համում եւ, գուրս գալով որենքով սահմանված հատկացումները:

24. Կոռպերատիվ կազմակերպությունների վարչությունների նախագահները և գլխավոր հաշվապահները պարտավոր են տանել ճիշտ հաշվառում վատնումներից և հափշտակումներից առաջացած վատների ճածկման վերաբերյալ կոռպերատիվ կազմակերպությունների ոգտին բոնագանձումների բոլոր կատարողական թերթերի և պարտավոր են պարբերաբար հետեւվել բոնագանձման ըստ այդ կատարողական թերթերի և հետեւվել բոնագանձված գումարների մուծմանը կոռպերատիվ կազմակենթապության յեկամուտի հաջողին:

25. Այն գեպքում, յերբ գույքը չինելու պատճառով հնարավոր չե դատապարտյախներից (պատասխանատվից) բոնագանձել պահանջված գումարը, դատական կատարածումները պարտավոր են տեղեկանալ դատապարտյալի ապրած վայրի և աշխատանքի մասին և ձեռք առնել միջոցներ տուժի բոնագանձումը կատարլու նրա նոր վայրի աշխատավարձից:

26. Յեթե կոռպերատիվ կազմակերպությունը չի կարող հայտնաբերել դատապարտյալի (պատասխանատվի) ընակավայրը, այդ գեպքում նա այդ մասին հայտնում և դատավճիռը կայացնող դատարանին կամ դատախազությանը՝ պատասխանատվին գտնելու համար ձեռք առնելու միջոցներ:

ԽՍՀՄ Դատախազ՝ Ա. Վ. Իշինսկի  
ԽՍՀՄ Արդարադատության ժողովրդական Կամիսար՝  
Ն. Ռիջինվ,

Բ Ա Վ. Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ե

ԽՍՀՄ տուիտի ժաղկամատի հրամանը՝ խանութի աշխատանքի  
հիմնական կոնվենցի հաստատման մասին:

Բաժին առաջին

Խանութի աշխատանքի կարգը

Եջ

1. Ապրանքների վաճառքի կազմակերպումը	5
2. Դրամարկների աշխատանքը, որպա վաճառքի գումարի հանձնման և ծախսման կարգը	9
3. Կառավարի տնտեսությունը	13
4. Ապրանքների ստացումը և դրանցումը	14
5. Ապրանքների պահպանումը	16
6. Նյութապես պատասխանառու անձանց հաշվետվությունը	18
7. Ապրանքային կորուստի ակտավորման կարգը	20
8. Ապրանքա-նյութական արժեքների ինվենտարիզացիան	23

Բաժին յերկրորդ

Խանութի աշխատավերի իրավունքները յեզ պարտականությունները:

1. Խանութի գլուխկառքի և նրա ողնականի իրավունքները և պարտականությունները	32
2. Սեկցիայի բաժնի վարչի և նրա ողնականների իրավունքներն ու պարտականությունները	45
3. Վաճառողի իրավունքները և պարուականությունները	49
4. Խանութի գանձապահի իրավունքները և պարտականությունները	53
5. Խանութների գլխավոր (ավագ) հաշվապահների իրավունքները և պարտականությունները	56
Հավելված—ԽՍՀՄ Դասուիազի և ԽՍՀՄ արդարաբառության Ժողովի հրամանը:	59
Յուրացումների ու հավատակումների գործերի մասին կատարվող հետաքննությունը և գատաքննությունը սպառկոռությունում:	60



Թարգմանեց՝ Ա. Դադարյան  
Խմբագրեցին՝ Ա. Մամյան  
Ա. Պալիկյան  
Լ. Նահապետյան

Գլավեմի լիազոր Ե-1078. Գատվեր № 9. Տերաֆ 6000.

Գլավամարտանի Հրատարակչության տպարան, Ցերեման Արտյոմ 104.



9hvc 2 ft.

58

25-011

35